efes INSURANCE

Ավտոտրանսպորտային միջոցների կամավոր ապահովագրության կանոններ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԷՖԵՍ» ԱՓԲԸ խորհրդի կողմից
Արձանագրություն 2025/5 առ 24/12/2025թ.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է
1 ապրիլի 2026 թվականից

Կոդ՝ 04.01.01
Խմբագրություն՝ 6.0

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 3

ԳԼՈՒԽ 3. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ («ԱՎՏՈԿԱՍԿՈ») – «ԲԱԺԻՆ Ա» 6

ԳԼՈՒԽ 4. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ - «ԲԱԺԻՆ Բ» 13

ԳԼՈՒԽ 5. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԱՐՈՐԴԻ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ - «ԲԱԺԻՆ Գ» 14

ԳԼՈՒԽ 6. ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ («ՌՈՈՒԴՔԵՅՐ ԱՍՍԻՍԹԱՆՍ») - «ԲԱԺԻՆ Դ» 16

ԳԼՈՒԽ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 19

ԳԼՈՒԽ 8. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ 24

ԳԼՈՒԽ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ 27

ԳԼՈՒԽ 10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ 36

ԳԼՈՒԽ 11. ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ 41

ԳԼՈՒԽ 12. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 42

ԳԼՈՒԽ 13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ 42

ԳԼՈՒԽ 14. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ 42

ԳԼՈՒԽ 15. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ 44

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ավտոտրանսպորտային միջոցների կամավոր ապահովագրության սույն կանոնները (այսուհետ նաև՝ Կանոններ) սահմանում են ցամաքային տրանսպորտային միջոցների (այսուհետ նաև՝ ՏՄ) ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի կնքման, դադարեցման և ապահովագրական հատուցումների պայմանները և կարգը:

1.2. Տրանսպորտային միջոցների կամավոր ապահովագրության սույն կանոնների և ՀՀ օրենսդրության հիման վրա «ԷՖԵՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ (այսուհետ նաև՝ Ապահովագրող) կնքում է տրանսպորտային միջոցների ապահովագրության պայմանագրեր ինչպես գործունակ ֆիզիկական անձանց, այնպես էլ ցանկացած կազմակերպաիրավական ձևի իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող հիմնարկների հետ (այսուհետ նաև՝ Ապահովադիր):

1.3. Կանոնները մշակված են ՀՀ օրենսդրությանը համապատասխան և հանդիսանում են Կանոնների հիման վրա կնքված տրանսպորտային միջոցների ապահովագրության վկայագրի/պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հավելյալ և անբաժանելի մասը և պարտադիր են Ապահովագրողի, Ապահովադրի (այսուհետ միասին՝ Կողմեր), ինչպես նաև Շահառուի համար:

1.4. Կանոնների հիման վրա «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն իրականացնում է ապահովագրություն ոչ կյանքի ապահովագրության հետևյալ դասերով.

- Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն (բացառությամբ երկաթուղային),
- Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն:

1.5. Տրանսպորտային միջոցների ապահովագրության վկայագրի/պայմանագրի կնքման ժամանակ և/կամ դրա գործողության ընթացքում Կողմերը կարող են գրավոր ձևով պայմանավորվել Կանոնների առանձին դրույթների փոփոխության (չկիրառման) և/կամ Կանոններով չնախատեսված լրացուցիչ դրույթների կիրառման մասին:

1.6. Կանոնների և վերջինիս հիման վրա կնքված Պայմանագրի միջև տարընթերցումների դեպքում գերակայությունը տրվում է Պայմանագրին:

1.7. Կանոնների և վերջինիս հիման վրա կնքված Պայմանագրի երկլեզու կազմման դեպքում, դրանց միջև տարընթերցումների դեպքում գերակայությունը տրվում է հայերեն տարբերակին:

1.8. Ապահովագրողը պարտավոր է Ապահովադրին, իսկ վերջինս՝ Լիազորված վարորդներին ծանոթացնել Կանոնների և Պայմանագրի պայմաններին և բովանդակությանը, ինչպես նաև դրանցով նախատեսված պարտականությունների անվերապահ կատարման մասին: Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից և Ապահովագրված անձից պահանջելու կատարել Կանոններով և Պայմանագրով սահմանված պարտականությունները: Ապահովագրված անձն Ապահովադրի հետ հավասարապես կրում է Կանոններով և/կամ Պայմանագրով նախատեսված իրենց պարտականությունների չկատարման կամ թերի կատարման համար պատասխանատվությունը, այդ թվում՝ այդ պարտականությունների չկատարման առնչությամբ ապահովագրական հատուցումների հետ կապված բացասական հետևանքների պատասխանատվությունը:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կանոններում օգտագործվող տերմինները և հասկացությունները կիրառվում են դրանց՝ Կանոններով տրված սահմանումներին համապատասխան: Կանոններով չսահմանված տերմինները կիրառելի են

դրանց ուղղակի լեզվական նշանակությամբ, եթե դրանց նշանակությունը օրենսդրական կամ ենթաօրենսդրական իրավական ակտերով պարզաբանված չէ:

2.2. **Ապահովագրող՝** «ԷՖԵՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:

2.3. **Ապահովադիր՝** Ապահովագրողի հետ Պայմանագիր կնքած անձ:

2.4. **Ապահովագրված անձ՝** ավտոտրանսպորտային միջոցում գտնվող անձ (վարորդ և/կամ ուղևոր), որի հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է ապահովագրության պայմանագրի առարկա (Կանոնների Բաժին Գ-ի մասով):

2.5. **Շահառու՝** ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցումը ստանալու իրավունք ունեցող անձ:

2.6. **Ապահովագրության պայմանագիր** (այսուհետ՝ Պայմանագիր կամ Վկայագիր)՝ Ապահովադրի և Ապահովագրողի միջև գրավոր համաձայնություն, որի հիման վրա Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված որոշակի գումարի (ապահովագրավճարի) դիմաց Կանոններով նախատեսված և Պայմանագրով նշված որոշակի ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադրին (Շահառուին) վճարել ապահովագրական հատուցում, բայց ոչ ավել, քան Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը:

2.7. **Ապահովագրական ռիսկ՝** առաջանալու որոշակի հավանականությամբ և պատահականությամբ օժտված ենթադրելի իրադարձություն, որի տեղի ունենալու դեպքի համար կնքվում է ապահովագրության պայմանագիրը:

2.8. **Ապահովագրական պատահար՝** Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած, Պայմանագրով և Կանոններով նախատեսված որևէ դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին կամ Շահառուին վճարել ապահովագրական հատուցում:

2.9. **Ապահովագրական գումար՝** Պայմանագրում սահմանված դրամական գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում վճարել ապահովագրական հատուցում:

2.10. **Ապահովագրական հատուցում՝** ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի կողմից Պայմանագրի և Կանոնների հիման վրա, Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի սահմաններում Շահառուին կամ Ապահովադրին վճարման ենթակա գումար:

2.11. **Ապահովագրավճար՝** Պայմանագրով սահմանված չափով, պայմաններով և ժամկետներում Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար:

2.12. **Ապահովագրական սակագին՝** ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ:

2.13. **Չհատուցվող գումար՝** Ապահովադրի մասնակցության չափը ապահովագրական պատահարի արդյունքում պատճառված վնասի հատուցմանը, որը սահմանվում է Պայմանագրով կոնկրետ գումարի կամ ապահովագրական գումարի կամ այլ մեծության նկատմամբ տոկոսային չափով:

2.13.1. **Ոչ պայմանական չհատուցվող գումար՝** Ապահովագրողը Պայմանագրով սահմանված ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց (ապահովագրական հատուցումը նվազեցվում է չհատուցվող գումարի չափով)՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից:

2.13.2. **Պայմանական չհատուցվող գումար՝** Ապահովագրողը Պայմանագրով սահմանված պայմանական չհատուցվող գումարի չափով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց, եթե այդ վնասը չի գերազանցում ապահովագրական պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:

2.14. **Ապահովագրության տարածք՝** տարածք, որի վրա տարածվում է Պայմանագրի գործողությունը և ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտականությունը:

2.15. **Լիազորված վարորդ՝** ֆիզիկական անձ, ով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ապահովագրության պայմանագրով իրավունք ունի վարելու ապահովագրված տրանսպորտային միջոցը:

2.16. ՏՄ-ի տիրապետելու ընթացքում լիազորված վարորդն իրականացնում է Կանոններում նշված Ապահովադրի այն պարտականությունները, որոնք կապված են ՏՄ-ի տնօրինման, շահագործման և պահպանման հետ:

2.17. Լիազորված վարորդի կողմից Ապահովադրի պարտականությունների չկատարումը կունենա նույն հետևանքները, որոնք կառաջանային, եթե այդ պարտականությունները չկատարվեին Ապահովադրի կողմից:

2.18. Եթե Պայմանագրում որպես Լիազորված վարորդ նշվել է կոնկրետ անձ (անձինք) կամ անձանց որոշակի խումբ, ապա նրանից (նրանցից) բացի որևէ այլ անձ, այդ թվում նաև՝ Պայմանագրում որպես Լիազորված վարորդ չնշված Ապահովադիրը, չի կարող հանդիսանալ Լիազորված վարորդ: Կանոնների Բաժին Դ-ի «Սթափ Վարորդ» ռիսկի շրջանակներում Ապահովագրողի կողմից վարորդի տրամադրման դեպքում տվյալ վարորդը լռելյայն համարվում է «Լիազորված վարորդ»:

2.19. Եթե Պայմանագրում Լիազորված վարորդներ նշված չեն, ապա Պայմանագիրը համարվում է կնքված «անսահմանափակ» սկզբունքով և այդ դեպքում ՏՄ-ն կարող է վարել ցանկացած անձ, ով կբավարարի Կանոնների 2.15 կետով նախատեսված Լիազորված վարորդ հասկացության պահանջներին, վերջինս լռելյայն համարվում է Լիազորված վարորդ:

2.20. Ապահովադիրը պարտավոր է Լիազորված վարորդին ծանոթացնել կնքված Պայմանագրի բովանդակությանը և տեղեկացնել Պայմանագրով նախատեսված պարտականությունների անվերապահ կատարման մասին:

2.21. Եթե Պայմանագրում ընդգրկվել է 23 տարեկան և ավելի փոքր տարիքով և/կամ 1-3 տարի վարորդական փորձ ունեցող Լիազորված վարորդ, որն ապահովագրական պատահարի պահին վարել է ՏՄ-ն, ապա Կանոնների 3.17 կետով նախատեսված ռիսկի դեպքում կիրառվում է ապահովագրական գումարի 2%-ի չափով (նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ) ոչ պայմանական չհատուցվող գումար:

2.22. Եթե Պայմանագրում ընդգրկվել է մինչև 1 տարի վարորդական փորձ ունեցող Լիազորված վարորդ, որը ապահովագրական պատահարի պահին վարել է ՏՄ-ն, ապա Կանոնների 3.17 կետով նախատեսված ռիսկի դեպքում կիրառվում է ապահովագրական գումարի 3%-ի չափով (նվազագույնը՝ 200,000 ՀՀ դրամ) չհատուցվող գումար:

2.23. Եթե Պայմանագրում ընդգրկվել է 23 տարեկան և ավելի փոքր տարիքով և/կամ 3 տարվա կամ ավելի քիչ վարորդական փորձ ունեցող Լիազորված վարորդ, որն ապահովագրական պատահարի պահին վարել է ՏՄ-ն, ապա Կանոնների 3.17 կետով նախատեսված ռիսկի դեպքում ապահովագրական հատուցման առավելագույն չափը կազմում է 2,000,000 ՀՀ դրամ:

2.24. Առանձին դեպքերում կարող են սահմանվել Լիազորված վարորդների նկատմամբ այլ սահմանափակումներ, ինչի մասին նշում է կատարվում ապահովագրության պայմանագրում:

2.25. **Տրանսպորտային միջոցներ (ՏՄ)՝** ճանապարհներով մարդկանց, բեռները կամ դրանց ամրակցված սարքավորումները փոխադրելու, ինչպես նաև ոչ տրանսպորտային աշխատանքներ կատարելու համար նախատեսված մեքենաներ, որոնք գործարկվում են շարժիչով, որոնց աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր.սմ-ը, կամ որոնց առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժ-ը:

2.26. Տրանսպորտային միջոցների ներքո հասկացվում են նաև հետևյալները. ավտոմեքենաներ՝ մարդատար, բեռնատար, բեռնամարդատար, ավտոբուսներ և այլ մարդատար մեքենաներ, կցասայլեր և կիսակցասայլեր, մոտոցիկլետներ, մոտորանիվներ, մոտորասայլակներ, կողմերի համաձայնությամբ այլ

ինքնագնաց սարքեր, այդ թվում՝ գյուղատնտեսական և քարշակային տեխնիկա, օժանդակ և գյուղատնտեսական այլ մեխանիզմներ:

2.27. Ապահովագրման ենթակա չեն այն ՏՄ-ները, որոնք Հայաստանի Հանրապետության տարածք են ներկրվել գործող մաքսային օրենսդրությամբ նախատեսված պահանջների խախտմամբ կամ գրանցված են ՀՀ պետական կառավարման մարմինների կամ Ինտերպոլի տեղեկատվական տվյալների բազայում՝ որպես նախկինում գողացված:

2.28. 2.27 կետում նշված դրույթի խախտմամբ կնքված ապահովագրության պայմանագրերով Ապահովագրողը չի կրում ոչ մի պարտավորություն, այդ թվում՝ ապահովագրական հատուցման տրամադրման, և այդ դեպքում պայմանագիրը համարվում է անվավեր, պատահարի պարագայում ապահովագրական հատուցումը ենթակա է մերժման և ապահովագրավճարը ենթակա չէ ետ վերադարձման:

2.29. **Տուժած անձինք՝** անձինք, ովքեր ապահովագրական պատահարի հետևանքով իրենց կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված, ինչպես նաև կերակրողի կորստի, հուղարկավորության ծախսերի հետ կապված վնասի հատուցման իրավունք ունեն՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

2.30. **Ճանապարհատրանսպորտային պատահար՝** պատահար, որը ծագում է ընդհանուր օգտագործման ճանապարհներով ՏՄ-ի շահագործման ընթացքում և/կամ դրա մասնակցությամբ, որի արդյունքում վնաս է հասցվում մարդկանց կյանքին, առողջությանը, ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց գույքին, ապահովագրված ՏՄ-ին կամ այլ ՏՄ-ին:

2.31. **Անձնական տվյալ՝** «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն անձնական տվյալ հանդիսացող և պայմանագրի և/կամ տրված համաձայնությունների, այլ փաստաթղթերի կնքման և/կամ դրանց հիման վրա (դրանց համաձայն) իրականացված գործողությունների շրջանակներում Ապահովադրի և/կամ Շահառուի և/կամ նրանց հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ Ապահովագրողին հայտնի դարձած (վերջինիս կողմից ձեռք բերված) տեղեկատվություն (տվյալ):

2.32. **Տաքսի՝** ավտոտրանսպորտային միջոցներ, որոնք շահագործվում են վճարի դիմաց ուղևորների փոխադրման համար: Կանոններով «տաքսի» են համարվում ինչպես փողոցում անձի կանչի միջոցով ուղղակիորեն կանգնեցվող և հասանելի մեքենաները, այնպես էլ նախապես պատվերով կամ թվային հարթակների միջոցով (օրինակ՝ /GG/Yandex/ և այլն) կազմակերպված ուղևորափոխադրումները՝ անկախ տվյալ ուղևորությունների հաճախականությունից: Եթե ապահովագրության օբյեկտ ավտոտրանսպորտային միջոցը շահագործվում է որպես տաքսի, ապա համապատասխան նշում պետք է արվի ապահովագրության վկայագրի օգտագործման նպատակ դաշտում՝ հակառակ դեպքում ապահովագրական հատուցման դիմումը ենթակա է մերժման Ապահովագրողի կողմից: Ընդ որում սույն կետի իմաստով տրանսպորտային միջոցը համարվում է որպես տաքսի շահագործվող, եթե դրա սեփականատերը, ապահովադիրը և/կամ լիազորված վարորդը գրանցվել է վերոհիշյալ թվային հարթակներում որպես նման ծառայություններ մատուցող կամ ձայնագրվող հեռախոսազանգով կամ գրավոր արձանագրությամբ հայտարարել է մեքենայի որպես տաքսի շահագործման վերաբերյալ՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք պատահարի ժամանակ մեքենան փաստացի շահագործվելիս է եղել որպես տաքսի, թե ոչ:

2.33. **Կողոպուտ՝** բացահայտ հափշտակություն, երբ հանցավորը գիտակցում է, որ արարքը կատարում է բացահայտ:

2.34. **Գողություն՝** գաղտնի հափշտակություն:

ԳԼՈՒԽ 3. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ («ԱՎՏՈԿԱՍԿՈ») – «ԲԱԺԻՆ Ա»

Ապահովագրության պայմանագրի առարկան և կնքման կարգը

3.1. Կանոններում «Ավտոկասկո» ապահովագրության պայմանագրի ներքո հասկացվում է Կողմերի միջև համաձայնությունը, ըստ որի՝ Ապահովագրողը պայմանագրով սահմանված վճարի դիմաց (ապահովագրավճար) պայմանագրում նախատեսված պատահարների տեղի ունենալու դեպքում պարտավորվում է Ապահովադրին, իսկ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ Շահառուին պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի սահմաններում հատուցել ապահովագրական պատահարի արդյունքում ապահովագրված գույքին (ապահովագրված ՏՄ-ին և/կամ լրացուցիչ սարքավորումներին) պատճառված իրական վնասը:

3.2. Կանոններում իրական վնասի ներքո հասկացվում են ՏՄ-ի և/կամ լրացուցիչ սարքավորումների (այսուհետ՝ ԼՍ) վնասվածքը կամ կորուստը, ինչպես նաև Կանոններում նշված այն ծախսերը, որոնք կատարել է Ապահովադիրը, և որոնք կապված են ՏՄ-ի և/կամ ԼՍ-ի կորստի կամ վնասվածքի հետ:

3.3. Ապահովադիրը կարող է կնքել Պայմանագիր ինչպես իր, այնպես էլ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի (այսուհետ՝ Շահառու) օգտին, ով օրենքի, այլ իրավական ակտի կամ պայմանագրի հիման վրա ապահովագրված ՏՄ-ի պահպանման շահ ունի:

3.4. Ապահովագրական պատահարի դեպքում գրավառու հանդիսացող Շահառուին ապահովագրական հատուցումը կարող է վճարվել ապահովագրական հատուցման վճարման վերաբերյալ որոշման կայացման օրվա դրությամբ գրավով ապահովված պարտավորության գումարի սահմաններում, իսկ հատուցման ենթակա գումարի մնացած մասը վճարվում է Ապահովադրին կամ այլ Շահառուին, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

3.5. Ապահովադիրն իրավունք ունի Պայմանագրի գործողության ընթացքում Պայմանագրում նշված Շահառուին փոխարինել այլ անձով, ինչի մասին Ապահովադիրը պետք է գրավոր ծանուցի Ապահովագրողին:

3.6. Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով այն դեպքում, եթե նա իրականացրել է Պայմանագրով սահմանված որևէ պարտականություն կամ Ապահովագրողին ներկայացրել է ապահովագրական հատուցում ստանալու պահանջ:

3.7. Շահառուի կամ Լիազորված վարորդի (Ապահովագրված անձի) կողմից ապահովագրության պայմանագրի պայմանների խախտումը կհամարվի ապահովագրության պայմանագրի պայմանների խախտում Ապահովադրի կողմից:

3.8. Ըստ Կանոնների՝ Ապահովագրության տարածք են համարվում Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության տարածքները, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով: Եթե Պայմանագրով ապահովագրության տարածք է սահմանվում Ամբողջ Աշխարհը կամ ԱՊՀ երկրներ, ապա ՀՀ և Վրաստանի տարածքից դուրս պայմանագիրը գործում է համախառն 30 օր ժամկետով:

3.9. Եթե Վրաստանի տարածքը ի սկզբանե ներառված չէ Պայմանագրում, ապա այն ներառվում է Ապահովագրության տարածքում Կողմերի միջև Ապահովագրության տարածքի ընդլայնման վերաբերյալ համապատասխան համաձայնագրի կնքման ամսաթվից և գործում է մինչև Պայմանագրի ավարտի ամսաթիվը:

3.10. 3.9 կետով սահմանված համաձայնագրին կարող է փոխարինել Ապահովադրի և Ապահովագրողի միջև ձեռք բերված բանավոր համաձայնությունը, որն Ապահովագրողի կողմից արձանագրվել է ձայնագրվող հեռախոսազանգով:

3.11. 3.9 կետով սահմանված համաձայնագրի բացակայության դեպքում Վրաստանի Հանրապետության տարածքում տեղի ունեցած պատահարները չեն հանդիսանա ապահովագրական պատահար և դրանց հետ կապված վնասները չեն հատուցվի Ապահովագրողի կողմից:

Ապահովագրության օբյեկտ

3.12. Համաձայն Կանոնների «Բաժին Ա»-ի (Ավտոկասկո ապահովագրություն)՝ Պայմանագրով ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի կամ Շահառուի գույքային շահերը կապված

ՏՄ-ի (ներառյալ ՏՄ-ին ամրակցված ԼՍ-ն) տիրապետման և/կամ օգտագործման ընթացքում առաջացած իրական վնասի հետ:

3.13. ՏՄ-ն, որն ունի վնասվածք և/կամ մաշվածություն, ապահովագրվում է միայն այն պայմանով, որ նման վնասվածքը և/կամ մաշվածությունը կվերականգնվի Ապահովադրի կողմից իր իսկ հաշվին (ապակե կամ պլաստիկ բաղադրամասերի վնասվածքները, ներառյալ ճաքերը, կոտրանքները, քերծվածքները, որոնք ենթակա չեն վերանորոգման, պետք է պարտադիր փոխարինվեն այլ բաղադրամասերով), իսկ ՏՄ-ն կենթարկվի լրացուցիչ զննման (թերությունների վերացումից հետո): Ինչպես Պայմանագրի կնքման պահին առկա վնասները, այնպես էլ Լրացուցիչ զննումն արձանագրվում է Զննման Ակտով, որը ստորագրվում է Ապահովագրողի և Ապահովադրի կողմից, և հավաստում է Պայմանագրի կնքման պահին վնասված հատվածների առկայությունը և հետագայում դրանց վերանորոգված լինելու փաստը: Զննման Ակտի բացակայության դեպքում վնասված հատվածների վերանորոգված լինելը Ապահովագրողի կողմից չի ընդունվում, և գործում է Կանոնների 3.14 կետը:

3.14. Եթե տրանսպորտային միջոցի դետալը կամ բաղադրիչը նախկինում վնասված է եղել և/կամ մաշվածության հետևանքով ոչ պիտանի դարձած է եղել, ապա պայմանագրի գործողության ընթացքում այդ դետալին կամ դրա բաղադրիչին պատճառված վնասները ենթակա չեն հատուցման:

3.15. Որպես ՏՄ-ին ամրակցված ԼՍ՝ ապահովագրության ենթակա են այն սարքավորումներն ու պարագաները, որոնք չեն կազմում ՏՄ-ի արտադրող գործարանի կողմից նախատեսված լրակազմի մասը կամ ՏՄ-ի և/կամ ԼՍ-ի զննումից հետո կողմերի համաձայնությամբ համարվում են լրացուցիչ սարքավորումներ:

Ապահովագրական ռիսկեր

3.16. Ապահովագրողն իրականացնում է տրանսպորտային միջոցների ապահովագրություն առևանգումից և ֆիզիկական վնասից՝ առաջացած Կանոններում նշված ռիսկերից յուրաքանչյուրով կամ դրանցից մի քանիսի համակցությամբ:

3.17. «**ՃՏՊ**» (ճանապարհատրանսպորտային պատահար) – պատահար, որը ծագում է ապահովագրված ՏՄ-ի ճանապարհային երթևեկության ընթացքում և մասնակցությամբ (վրաերթ, շրջում, բախում և այլն)՝ ներառյալ այլ մեխանիկական տրանսպորտային միջոցի կողմից կանգառի վիճակում գտնվող ապահովագրված ՏՄ-ին հասցված վնասը, կամ ապահովագրված ՏՄ-ի ինքնավթարը՝ առանց վարորդի մասնակցության, մասնավորապես.

3.17.1. **ՃՏՊ – բախում այլ մեքենաների հետ**՝ ճանապարհատրանսպորտային պատահար, որի արդյունքում ապահովագրված ՏՄ-ին պատճառվում է վնաս՝ դրա՝ ճանապարհային երթևեկության ընթացքում այլ տրանսպորտային միջոցի հետ բախման հետևանքով, ներառյալ այլ տրանսպորտային միջոցի կողմից կանգառի վիճակում գտնվող ապահովագրված ՏՄ-ին հասցված վնասը, որի փաստնարձանագրվել է համապատասխան իրավասու մարմնի կողմից, ընդ որում պատահարում ներգրավված բոլոր կողմերը հայտնի են, իսկ հակառակ դեպքում կա ՃՏՊ-ի տեղի ունենալը հավաստող տեսաձայնագրություն,

3.17.2. **ՃՏՊ – երրորդ անձանց կողմից հասցված վնաս**՝ ճանապարհատրանսպորտային պատահար, որի արդյունքում ապահովագրված ՏՄ-ին պատճառվում է վնաս երրորդ անձանց գործողությունների հետևանքով ԱՊՊԱ պատահարի արդյունքում՝ այն մասով, որը գերազանցում է ԱՊՊԱ-ով հատուցման ենթակա չափը,

3.17.3. **ՃՏՊ – բախում այլ առարկաների հետ**՝ ճանապարհատրանսպորտային պատահար, որի արդյունքում ապահովագրված ՏՄ-ին պատճառվում է վնաս՝ դրա բախման հետևանքով անշարժ կամ շարժական այլ առարկաների, կառուցվածքների, արգելապատնեշների, շինությունների, ճանապարհային կահավորման, կենդանիների կամ այլ՝ տրանսպորտային միջոց չհանդիսացող օբյեկտների հետ, ներառյալ՝ շրջումը և կողաշրջումը, պայմանով, որ բախման փաստով առկա են լուսանկարներ կամ Ապահովագրողի համար ընդունելի այլ ապացույցներ:

3.18. «**Հրդեհ**» - անվերահսկելի այրում կամ պայթյուն, որը ծագել է արտաքին ազդեցության արդյունքում[1]: «Հրդեհի» ներքո հասկացվում է նաև անվերահսկելի հրդեհումը կամ պայթյունը, որը ծագել է ՏՄ-ի ինքնայրման հետևանքով: Ցանկացած պարագայում հատուցման ենթակա չէ ՏՄ-ում ոչ գործարանային պայմաններում տեղադրված գազի բալոնի պայթյունից կամ գազի արտահոսքից առաջացած հրդեհից պատճառված վնասները, այդ թվում ՃՏՊ հետևանքով առաջացած հրդեհից կամ պայթյունից վնասները: Ընդ որում, Ապահովագրողի պահանջով, Ապահովադիրը պարտավոր է դիմել իրավասու մարմիններին վարույթի նախաձեռնման համար և եթե վարույթը նախաձեռնած մարմնի կողմից չի բացահայտվել դրա առաջացման պատճառները և/կամ այն կատարող անձանց, ապա Ապահովագրողն ազատվում է սույն կետում նշված ապահովագրական հատուցում տրամադրելու պարտավորությունից:

3.19. «**Վնասվածք** (ընդ որում թռչող կամ վայր ընկնող առարկայի հետևանքով)» - ՏՄ-ի վրա այլ առարկայի արտաքին ազդեցությունը (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների անիվների տակից մանրախճի, քարերի կամ այլ կոշտ գոյացությունների արտանետումը, քամու հետևանքով ծառերի, ճյուղերի, տանիքների և այլ իրերի անկումը), մասնավորապես.

3.19.1. **Վնասվածք – դիմապակու վնասներ**՝ ապահովագրված ՏՄ-ի դիմապակուն պատճառված վնաս՝ տրանսպորտային միջոցների անիվների տակից մանրախճի, քարերի կամ այլ կոշտ գոյացությունների արտանետման, ինչպես նաև այլ արտաքին փոքր առարկաների հարվածի հետևանքով, ընդ որում վնասը՝ պատճառված առանց արտաքին ազդեցության հետքերի, այդ թվում՝ քարերի կամ այլ առարկաների հարվածի կետեր, ենթակա չէ հատուցման,

3.19.2. **Վնասվածք – վայր ընկնող առարկաներից**՝ ապահովագրված ՏՄ-ին պատճառված վնաս՝ դրա վրա ծառերի, ճյուղերի, տանիքների, շինարարական տարրերի կամ այլ առարկաների վայր ընկնելու հետևանքով առաջացած արտաքին մեխանիկական ազդեցության արդյունքում:

3.20. «**Տարերային աղետ**» - բնության տարերքների արտաքին ազդեցությունը ՏՄ-ի վրա՝ կայծակ, բուք, փոթորիկ, ջրհեղեղ, մրրկասյուն, կարկուտ, բացառությամբ երկրաշարժի:

3.21. «**Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ**» - երրորդ անձանց կողմից ՏՄ-ի նկատմամբ անօրինական գործողությունների իրականացում կամ իրականացման փորձ, այդ թվում՝ վանդալիզմ: Միայն ՏՄ առանձին դետալների, օրինակ՝ հիմնական անվադողերի, հայելիների, լուսարձակների գողությունը առանց ամբողջական ՏՄ գողության համարվում է «Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ»:

Սույն կետով տրամադրվում է հատուցում Պայմանագրի գործողության ընթացքում ոչ ավել քան երկու անգամ:

3.21.1. **Վանդալիզմ**՝ ապահովագրված ՏՄ-ին պատճառված վնաս, որն առաջացել է ՀՀ-ում երրորդ անձանց կողմից կատարված դիտավորյալ հակաօրինական գործողությունների կամ դրանց իրականացման փորձի հետևանքով. ՏՄ-ի հրկիզումը, արտաքին կամ ներքին մասերի վնասումը, կոտրումը, փչացումը, ներկի, ապակիների, հայելիների, թափքի կամ այլ տարրերի դիտավորյալ վնասումը՝ առանց ՏՄ-ի կամ դրա առանձին մասերի գողության,

3.21.2. **ՏՄ առանձին մասերի գողություն**՝ ՀՀ-ում և Վրաստանում երրորդ անձանց կողմից ապահովագրված ՏՄ-ի առանձին մասերի, դետալների կամ պարագաների հափշտակությունը կամ հափշտակության փորձը՝ առանց ամբողջական ՏՄ-ի հափշտակության, ներառյալ հիմնական անվադողերի, հայելիների, լուսարձակների և այլ մասերի գողությունը:

3.22. «**Կենդանիների գործողություններ**» - ՏՄ-ին արտաքին ներգործության արդյունքում վնասվածքի պատճառում կենդանիների գործողությունների հետևանքով, բացառությամբ մեքենայի սրահին և բացառապես մեքենայի ներսից հասանելի մասերին պատճառված վնասները, որոնք առաջացել են

[1] Տաքացած դետալների հետ արտաքին առարկայի ներգործության արդյունքում առաջացած անվերահսկելի այրումը կամ պայթյունը չեն համարվում ապահովագրական պատահար, եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի համաձայնությամբ:

տրանսպորտային միջոցի մեջ գտնվող կամ դրա սրահին հասանելիություն ունեցող անձանց կողմից ներս բերված կենդանիների կողմից

3.23. «**Անհայտ ծագման վնասներ**» - ապահովագրված ՏՄ-ին պատճառված արտաքին տեսանելի վնաս, որն Ապահովադրի կողմից հայտնաբերվել է ՏՄ-ի զննման պահին, սակայն որի առաջացման կոնկրետ ժամանակը, վայրը, պատճառը կամ այն առաջացրած անձը հայտնի չեն, պայմանով, որ վնասը չի հանդիսանում սույն պայմանագրով բացառություն և առկա են Ապահովագրողի համար ընդունելի ապացույցներ վնասի փաստացի գոյության վերաբերյալ:

3.24. «**Առևանգում**» - ՀՀ-ում և Վրաստանում ՏՄ ամբողջական կորուստ գողության, կողոպուտի, ավազակության հետևանքով: Կողմերի լրացուցիչ համաձայնությամբ Առևանգում ռիսկի ներքո կարելի է հասկանալ (ներառել) նաև ՏՄ-ի հափշտակությունը խարդախության միջոցով:

3.25. «**Վնաս**» - այն ռիսկերի համակցությունը, որոնք թվարկված են Կանոնների 3.17 – 3.22 ենթակետերում:

3.26. Ապահովագրության պայմանագրով կարող են նախատեսվել հավելյալ ռիսկեր, որոնց մասին հատուկ նշում է կատարվում Վկայագրում: Որոշ հավելյալ ռիսկեր են.

3.26.1. «**Բոլոր ռիսկեր**» - այն ռիսկերի համակցությունը, որոնք թվարկված են Կանոնների 3.17 – 3.24 ենթակետերում: :

3.26.2. «**Նոր պահեստամասեր**» - Կանոնների 9.5 դրույթով նախատեսված տարեկան մաշվածության տոկոսադրույքը սահմանվում է 0%, եթե պատահարի դրությամբ.

1. ապահովագրված մեքենան արտադրվել է ոչ շուտ քան 3 տարին և ապահովագրված մեքենայի շարժիչի տեսակը էլեկտրական է,
2. ապահովագրված մեքենան արտադրվել է ոչ շուտ քան 5 տարին և ապահովագրված մեքենայի շարժիչի տեսակը էլեկտրական չէ:

3.26.2.1. Սույն դրույթը չի գործում.

1. ՏՄ ամբողջական կորստի և առևանգման դեպքում,
2. անիվներին հասցված վնասի դեպքում,
3. եթե ՏՄ մակնիշը Տեսլա (Tesla) է և ՏՄ-ն ձեռք է բերվել երկրորդային շուկայից,
4. եթե ՏՄ-ն ՀՀ է ներմուծվել և/կամ ՀՀ-ում ձեռք է բերվել վթարված կամ անսարք վիճակում և չի վերանորոգվել ՏՄ արտադրողի կողմից արտադրված նոր, չօգտագործված պահեստամասերով:

3.26.3. «**Նոր դիմապակի**» - Կանոնների 9.5 դրույթով նախատեսված տարեկան մաշվածության տոկոսադրույքը սահմանվում է 0% միայն ապահովագրված ՏՄ-ի դիմապակու մասով՝ անկախ մեքենայի արտադրման տարեթվից: Սույն դրույթը չի գործում ՏՄ ամբողջական կորստի և առևանգման դեպքում:

3.26.4. «**Անիվների վնաս**» - Պայմանագրով չի կիրառվում Կանոնների 3.28.2 կետով սահմանված բացառությունը և միայն անիվների (այդ թվում՝ անվադողերի, անվահեծի, անվահեծի ծածկոցների կամ վրադիրների) վնասները նույնպես ենթակա են հատուցման, մասնավորապես.

3.26.4.1. **Անիվների վնաս՝ ճանապարհածածկի թերությունների հետևանքով՝** ապահովագրված ՏՄ-ի անիվներին պատճառված վնաս՝ ճանապարհի փոսերի, ճեղքերի, նստվածքների, անհարթությունների կամ ճանապարհածածկի այլ թերությունների հետևանքով,

3.26.4.2. **Անիվների վնաս՝ մայթեզրին կամ այլ առարկային բախվելու հետևանքով՝** ապահովագրված ՏՄ-ի անիվներին պատճառված վնաս, որն առաջացել է մայթեզրին, եզրագծին, արգելապատնեշին կամ այլ անշարժ կամ շարժական առարկային բախվելու հետևանքով:

3.26.5. «**Բացառությունների կրճատում**» - Պայմանագրով չեն կիրառվում Կանոնների 10.3.3, 10.3.4, 10.3.5, 10.3.6 բացառությունները և վնասները՝ առաջացած կից թվարկված բացառությունների հետևանքով՝ ենթակա են հատուցման:

3.26.6. «**Արագ պահեստամասեր**» - Ապահովագրական պատահարի արդյունքում պատճառված վնասների վերանորոգման ժամանակ ՀՀ-ում ՏՄ դետալների բացակայության դեպքում պատվիրվում են արտասահմանից՝ հնարավորինս արագ առաքում ապահովող տարբերակով, եթե հնարավոր տարբերակների առաքման ժամանակի տարբերությունը գերազանցում է 20 օրացույցային օրը և տարբերակների միջև ՏՄ դետալների արժեքը չի գերազանցում 2 անգամը և/կամ 1,000,000 դրամը:

3.26.7. «**Լիցքավորման համակարգի վնաս**» - Պայմանագրով չի կիրառվում Կանոնների 10.4.9 կետով սահմանված բացառությունը և ՏՄ քարշակման (բարձր լարման) մարտկոցին, տրանսպորտային միջոցի լիցքավորման համակարգին կամ դրանց հետ կապված բարձր լարման սնուցման և մալուխային բաղադրիչներին հասցված վնասները նույնպես ենթակա են հատուցման:

Ապահովագրական պատահար

3.27. Ապահովագրական պատահար է համարվում ցանկացած պատահար, որը հանգեցրել է ՏՄ-ի և/կամ դրան ամրակցված ԼՍ-ի վնասվածքի, կորստի (ոչնչացմանը), և որի հետևանքով առաջացել է Ապահովագրողի՝ ապահովագրական հատուցում վճարելու պարտականությունը:

3.28. Ապահովագրական պատահար չեն համարվում հետևյալ իրադարձությունները.

3.28.1. ՏՄ-ի գործիքների հավաքակազմի, դեղատուփի, կրակմարիչի, վթարային կանգառի նշանի, ցեխահավաքների, դիմապակու խոզանակների, ապակիները մգեցնող թաղանթների, բանալիների, ՏՄ-ի արտադրող գործարանի կողմից նախատեսված լրակազմի մաս չհանդիսացող սարքավորումների և այլ պարագաների, հակաառևանգման համակարգերի վնասվելը, կորուստը (ոչնչացումը) կամ հափշտակությունը, ինչպես նաև ՏՄ գրանցման նշանների (հաշվառման համարանիշների) գողությունը կամ հափշտակությունը, եթե դրանք ապահովագրված չեն որպես լրացուցիչ սարքավորում,

3.28.2. անիվների (այդ թվում՝ անվադողերի, անվահեծի, անվահեծի ծածկոցների կամ վրադիրների), դրանց բաղկացուցիչ մասերի վնասվածքը՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

- վնասը պատճառվել է երրորդ անձանց հակաօրինական գործողությունների հետևանքով ,
- վնասը պատճառվել է ապահովագրական ռիսկերից առաջացած պատահարի արդյունքում, որի հետևանքով ապահովագրված ՏՄ-ին հասցվել են նաև այլ վնասներ,

3.28.3. շահագործման կամ առանց դրա արդյունքում ՏՄ-ի դետալների, բաղադրիչների, հանգույցների, ագրեգատների կոտրումը, աննսարքությունը, արգելակումը կամ շարքից դուրս գալը (բացառությամբ ՃՏՊ-ի հետևանքով)՝ ներառյալ օտար առարկաների կամ նյութերի ագրեգատների ներթափանցմամբ պայմանավորված (հիդրոհարված և այլն) դեպքերը,

3.28.4. էլեկտրասարքերի, էլեկտրահաղորդալարերի, լուսարձակների, ՏՄ-ի այլ մասերի, դետալների, հանգույցների և ագրեգատների կոտրումը, խափանումը, աննսարքությունը, շարքից դուրս գալը, վնասվելը, եթե դրանք ապահովագրական պատահարի ուղղակի հետևանք չեն,

3.28.5. ՏՄ-ի վնասվածքը, որն առաջացել է ցանկացած տեսակի տրանսպորտով ապահովագրված ՏՄ-ի փոխադրման, բեռնման, բեռնաթափման՝ ներառյալ տարհանման (էվակուացիայի) ընթացքում,

3.28.6. Ապահովադրի կողմից վարձակալության, վարձույթի կամ լիզինգի հանձնված ապահովագրված ՏՄ-ն Ապահովադրին չվերադարձնելը, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

3.28.7. ՏՄ գունափայլային շերտի կետային վնասվածքները, ՏՄ ցանկացած դետալի վրա առաջացած հետքերը՝ առանց դետալների վնասման (կոտրման), ինչպես նաև առանց արտաքին ազդեցության՝ գործարանային խոտանի, կամ սխալ վերանորոգման, կամ կոռոզիայի հետևանքով կամ առանց վերը թվարկվածների առկայության ներկածածկույթի շերտազատումը կամ նախկինում ունեցած գունային հատկանիշների

(երանգների) կորուստը, ինչպես նաև ՏՄ դետալների անբացատրելի կորուստը կամ ՏՄ-ի վրա առկա անբացատրելի հետքերը և վնասները, որոնց առաջացման պատճառները հնարավոր չէ հիմնավորել:

3.29. Եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, ապա Կանոնների 3.28 կետով սահմանված բացառությունները տարածվում են նաև 3.26.1 կետի՝ «Բոլոր ռիսկեր» ծածկույթի դրույթների վրա, այսինքն չեն համարվում ապահովագրական պատահար:

3.30. Առանց տրանսպորտային միջոցի արտադրողի գրավոր թույլտվության կամ անձամբ նրա կողմից չիրականացված կամ ոչ գործարանային պայմաններում վերածնափոխված տրանսպորտային միջոցները զրկվում են ապահովագրական ծածկույթից «Հրդեհ» ռիսկի մասով, և այդ դեպքում Ապահովագրավճարը վերահաշվարկման և վերադարձման ենթակա չէ:

Ապահովագրական գումար և ապահովագրական արժեք

3.31. Ավտոկասկո ապահովագրության դեպքում Ապահովագրական գումարը չի կարող գերազանցել ՏՄ-ի ապահովագրական արժեքը (գույքի իրական արժեքը, այսինքն՝ արժեքը դրա գտնվելու վայրում՝ ապահովագրության պայմանագրի կնքման օրվա դրությամբ):

3.32. Ապահովագրության ներկայացված ՏՄ-ի և ԼՍ-ի ապահովագրական արժեքը կարող է սահմանվել Ապահովադրի կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա, Ապահովագրողի կողմից՝ ելնելով դրանց սկզբնական արժեքից և մաշվածության նորմերից, ՏՄ-ի և ԼՍ-ի արժեքը հաստատող փաստաթղթերից:

3.33. Կողմերի համաձայնությամբ ՏՄ-ի և ԼՍ-ի արժեքը հաստատող փաստաթուղթ կարող են համարվել հաշիվ-տեղեկանքը, գնահատման ակտը, արտադրող գործարանի կամ պաշտոնական ներկայացուցչի (վաճառողի) հաշիվ-ապրանքագիրը, ՏՄ-ի ձեռք բերման չեկերը, անդորրագրերը և վճարման այլ փաստաթղթերը, մաքսային փաստաթղթերը, մատակարարների (դիլերների) գնացուցակները, կատալոգները, այլ տեղեկատու կամ պարբերական գրականությունը:

«Լրիվ», «Ոչ լրիվ համամասնական», «Ոչ համամասնական» ապահովագրություն

3.34. Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել «լրիվ», «ոչ լրիվ համամասնական», «ոչ համամասնական» ապահովագրության պայմաններով:

3.35. Ապահովագրությունը համարվում է «լրիվ», եթե ապահովագրական գումարը հավասար է ՏՄ-ի ապահովագրական արժեքին:

3.36. «Լրիվ» ապահովագրության դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է ամբողջ ծավալով, որը որոշվում է՝ համաձայն ապահովագրական հատուցման վճարման պայմանների:

3.37. Ապահովագրությունը համարվում է «ոչ լրիվ համամասնական», եթե ապահովագրական գումարը սահմանված է ՏՄ-ի ապահովագրական արժեքի գումարից պակաս:

3.38. «Ոչ լրիվ համամասնական» ապահովագրության դեպքում վնասը հատուցվում է մասնակի՝ ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի հարաբերությանը համամասնորեն:

3.39. Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել նաև «ոչ համամասնական» պայմաններով, ինչի մասին հատուկ նշում է կատարվում ապահովագրության պայմանագրում: Այս դեպքում ապահովագրական գումարը կարող է սահմանվել առավելագույնը ՏՄ-ի շուկայական արժեքի չափով:

3.40. «Ոչ համամասնական» պայմանով կնքված պայմանագրերի դեպքում ապահովագրական հատուցման իրականացման ժամանակ ապահովագրական արժեքի և ապահովագրական գումարի հարաբերակցությունը հաշվի չի առնվում. ապահովագրական գումարի սահմաններում հատուցվում է ՏՄ-ին հասցված ամբողջ վնասը՝ նվազեցրած չհատուցվող գումարի չափով: Ընդ որում, պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը ապահովագրական արժեքը գերազանցելու դեպքում, պայմանագիրը համարվում է առոչինչ գերազանցող մասի չափով:

3.41. ԼՍ-ի ապահովագրությունը (եթե այն նախատեսվում է պայմանագրով) հանդիսանում է միայն «լրիվ» ապահովագրություն:

ԳԼՈՒԽ 4. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ - «ԲԱԺԻՆ Բ»

Ապահովագրության պայմանագրի առարկան և կնքման կարգը

4.1. Տրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության համաձայն՝ Ապահովագրողը պարտավորվում է պայմանագրով սահմանված ապահովագրավճարի դիմաց ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում տուժած անձանց ապահովագրական գումարի սահմաններում վճարել ապահովագրական հատուցում Ապահովադրի (Լիազորված վարորդի) կողմից պատճառած վնասի չափով:

4.2. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է Ապահովադրի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա, որը կազմված է Ապահովագրողի սահմանված ձևով:

4.3. Համաձայն Կանոնների՝ ապահովագրության տարածք է համարվում ՀՀ տարածքը, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Ապահովագրության օբյեկտը

4.4. Ապահովագրության օբյեկտն Ապահովադրի (Լիազորված վարորդի) գույքային շահերն են՝ կապված ՏՄ-ի սեփականատիրոջ՝ ապահովագրության պայմանագրում նշված տարածքում ՏՄ-ի շահագործման ընթացքում տուժած անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս հասցնելու արդյունքում առաջացած քաղաքացիական պատասխանատվության հետ:

Ապահովագրական պատահարներ և ապահովագրության լրացուցիչ պայմաններ

4.5. Ապահովագրական պատահար է համարվում Ապահովադրի և/կամ Լիազորված վարորդի կողմից ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ապահովագրված ՏՄ-ի օգտագործման ժամանակ ՃՏՊ արդյունքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին վնաս հասցնելու իրադարձությունը, որը հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ՏՄ-ի սեփականատիրոջ և/կամ անմիջապես վնաս պատճառողի նկատմամբ վնասի հատուցման պահանջ ներկայացնելուն՝ կապված.

4.5.1. այլ տրանսպորտային միջոցների վնասման կամ ոչնչացման հետ,

4.5.2. այլ տրանսպորտային միջոցներում գտնվող գույքի վնասման կամ կորստի հետ,

4.5.3. շարժման մեջ գտնվող ՏՄ-ի հետ բախման արդյունքում այլ շարժական կամ անշարժ գույքի վնասման կամ կորուստի հետ,

4.5.4. ֆիզիկական անձանց մահվան կամ աշխատունակության կորստի (ժամանակավոր կամ մշտական) հետ:

4.6. 4.5 կետում նշված պատահարները չեն համարվում ապահովագրական և դրա հետևանքով պատճառված վնասները չեն հատուցվում, եթե դրանք հասցվել են՝

4.6.1. Իրավաբանական անձ Ապահովադրի («Ավտոկասկո» բաժնով նշված Շահառուի) աշխատակիցներին և/կամ նրանց կողմից ծառայողական պարտականությունների կատարման նպատակով օգտագործվող ունեցվածքին (գույքին), նրանց կողմից այն պարտականությունների իրականացման ժամանակ, որոնք բխում են Ապահովադրի (Շահառուի) հետ կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերից,

4.6.2. Ապահովագրության պայմանագրում նշված ՏՄ-ի Լիազորված վարորդին և/կամ ուղևորին և/կամ ՏՄ-ում առկա (այդ թվում՝ ՏՄ-ին կցված կամ ՏՄ-ի վրա տեղադրված) գույքին,

4.6.3. Ապահովադրին («Ավտոկասկո» բաժնով նշված Շահառուին և/կամ Լիազորված վարորդին և/կամ ՏՄ-ի սեփականատիրոջը) և/կամ նրանց ընտանիքի անդամներին, խնամակալներին, ինչպես նաև այն քաղաքացիներին և/կամ նրանց գույքին, ովքեր նրանց հետ վարում են համատեղ տնտեսություն, եթե Ապահովադիրը ֆիզիկական անձ է,

4.6.4. Գույքին, որը տնօրինում, օգտագործում, տիրապետում և/կամ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված որևիցե այլ հիմքով ստացել է Ապահովադիրը («Ավտոկասկո» բաժնով նշված Շահառուն և/կամ Լիազորված վարորդը և/կամ ՏՄ-ի սեփականատերը),

4.6.5. ՏՄ-ի միջոցով մրցումների, փորձարկումների կամ ուսումնական երթևեկության ժամանակ, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

4.6.6. Շրջապատող բնական միջավայրին, պետական սեփականություն համարվող բուսական կամ կենդանական աշխարհին, օդին, մակերևութային կամ ստորգետնյա ջրերին, ընդերքին,

4.6.7. Վտանգավոր թափոնների տեղափոխման ժամանակ պատճառված վնասները, եթե դրանք կապված են բացառապես վտանգավոր թափոնների հետ,

4.6.8. Հնառճ կամ այլ եզակի առարկաներին, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերից կամ մետաղներից պատրաստված իրերին, թանկարժեք զարդերին, արվեստի գործերին, կրոնական պաշտամունքի առարկաներին, հավաքածուներին, նկարներին, ձեռագրերին, դրամանիշերին կամ արժեթղթերին, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

4.6.9. ՏՄ-ով, որը երրորդ անձանց հակաօրինական գործողությունների հետևանքով դուրս է եկել սեփականատիրոջ տիրապետումից,

4.6.10. ՏՄ-ն գրանցման ներկայացնելու և/կամ տեխնիկական զննման համար սահմանված ժամկետի ավարտից հետո, եթե վնասը տեղի ունենալու ժամանակ նշված գործողությունները կատարված չեն եղել, և/կամ հետևյալների գործողության ժամկետի ավարտից հետո՝

- «Տրանզիտ» գրանցման նշանների (հաշվառման համարանիշների) վավերականության, եթե գրանցման ենթակա ՏՄ-ն սահմանված ժամկետում չի գրանցվել ոստիկանական մարմինների կողմից,
- տեխնիկական զննման անցման հավաստագրի,
- ՏՄ-ի գրանցման փաստաթղթի (ՏՄ-ի գրանցման/հաշվառման վկայագիր կամ ՏՄ-ի տեխնիկական անձնագիր),
- ՏՄ-ն վարող անձին պատկանող վարորդական իրավունքի:

Ապահովագրական գումար

4.7. Ապահովագրական գումարը (գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է իրականացնել հատուցում ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում) որոշվում է Կողմերի համաձայնությամբ:

4.8. Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, Ապահովագրողի կողմից կատարված հատուցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը:

4.9. Ապահովագրության պայմանագրում կարող են սահմանվել առանձին ապահովագրական գումարներ՝ տուժողների կյանքին և առողջությանը պատճառված վնասի համար («անձնական վնաս»), տուժողների գույքին հասցված վնասի համար («գույքային վնաս»):

ԳԼՈՒԽ 5. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԱՐՈՐԴԻ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ - «ԲԱԺԻՆ Գ»

5.1. Տրանսպորտային միջոցի վարորդի և ուղևորների դժբախտ պատահարներից ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի կամ ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին ապահովագրված ՏՄ-ում գտնվող անձանց (Ապահովագրված անձ) գույքային շահերը՝ կապված նրանց կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի, ներառյալ՝ աշխատունակության կորստի հետ:

5.2. Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, Բաժին Գ-ով ապահովագրական պատահար է համարվում ապահովագրված ՏՄ-ի վնասման և/կամ ոչնչացման հետևանքով ապահովագրված ՏՄ-ում գտնվող անձանց (Ապահովագրված անձանց).

5.2.1. աշխատունակության ժամանակավոր կորուստը,

5.2.2. ֆունկցիոնալության սահմանափակումը,

5.2.3. մահը,

5.2.4. բժշկական ծախսերը, որոնք անմիջականորեն կապ ունեն ՏՄ-ի վնասման:

5.3. Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել «Նստատեղերի համակարգով» կամ «Համամասնական համակարգով»:

5.4. «Նստատեղերի համակարգով» ապահովագրության դեպքում.

5.4.1. ապահովագրված նստատեղերի քանակը չի կարող գերազանցել ապահովագրված ՏՄ-ի տեխնիկական անձնագրում սահմանված նստատեղերի քանակը,

5.4.2. կարող է ապահովագրվել ՏՄ-ի միայն մեկ նստատեղը՝ վարորդինը, առջևի երկու նստատեղը կամ ՏՄ-ի տեխնիկական անձնագրում (հաշվառման վկայագրում) սահմանված նստատեղերն ամբողջությամբ,

5.4.3. ապահովագրական գումարը սահմանվում է յուրաքանչյուր նստատեղի համար առանձին:

5.5. «Համամասնական համակարգով» ապահովագրության դեպքում ՏՄ-ի ամբողջ ուղեխցիկի (ՏՄ-ում գտնվող բոլոր ապահովագրված անձանց) համար սահմանվում է ընդհանուր ապահովագրական գումար, իսկ յուրաքանչյուր ապահովագրված անձի համար ապահովագրական գումարը որոշվում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին:

5.6. «Համամասնական համակարգով» ապահովագրության դեպքում ապահովագրական պատահարի առաջացման պահին ՏՄ-ում գտնվող յուրաքանչյուր ուղևոր (ներառյալ վարորդը) համարվում է ապահովագրված ընդհանուր ապահովագրական գումարի հետևյալ չափաբաժիններով.

5.6.1. ընդհանուր ապահովագրական գումարի 40%-ի չափով, եթե տուժել է 1 ապահովագրված անձ,

5.6.2. ընդհանուր ապահովագրական գումարի 35%-ի չափով, եթե տուժել է 2 ապահովագրված անձ,

5.6.3. ընդհանուր ապահովագրական գումարի 30%-ի չափով, եթե տուժել է 3 ապահովագրված անձ,

5.6.4. յուրաքանչյուր ապահովագրված անձի համար հավասար չափաբաժնով, որը որոշվում է՝ ընդհանուր ապահովագրական գումարը հարաբերելով տուժած անձանց քանակին, եթե տուժել են 4 և ավելի ապահովագրված անձ:

5.7. Տրանսպորտային միջոցի վարորդի և ուղևորների դժբախտ պատահարներից ապահովագրության դեպքում ապահովագրական պատահար չի համարվում ապահովագրված անձի մահը, ֆունկցիոնալության սահմանափակումը կամ աշխատունակության ժամանակավոր կորուստը, որոնք ուղղակի կամ անուղղակի վրա են հասել ապահովագրական պատահարի առաջացմանն ուղղված Ապահովադրի, ապահովագրված անձի, Լիազորված վարորդի կամ Շահառուի դիտավորյալ գործողությունների արդյունքում՝ ներառյալ ինքնասպանությունը (ինքնասպանության փորձը) կամ ինքն իրեն մարմնական վնասվածքներ հասցնելը:

5.8. Ապահովագրված անձի մահը կամ ֆունկցիոնալության սահմանափակումը, որը ուղիղ պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում ապահովագրության ժամկետի ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետ, համարվում է ապահովագրական պատահար, եթե տեղի է ունեցել դժբախտ պատահարի տեղի ունենալու օրվանից վեց ամսվա ընթացքում:

5.9. «Դժբախտ պատահարի հետևանքով առաջացած բժշկական ծախսեր» ռիսկով ապահովագրական պատահար է համարվում ապահովագրված անձի կողմից ապահովագրության ժամկետի ընթացքում բժշկական հաստատություն դիմելը՝ պայմանավորված ապահովագրված ՏՄ-ի վնասման և/կամ ոչնչացման

հետևանքով ապահովագրված ՏՄ-ում գտնվող անձանց կողմից բժշկական օգնություն ստանալու անհրաժեշտությամբ:

5.10. Եթե այլ բան նշված չէ Վկայագրում, Պայմանագիրը համարվում է կնքված «Նստատեղերի համակարգով» և բոլոր նստատեղերի համար համաձայն Կանոնների 5.4.1 կետի:

ԳԼՈՒԽ 6. ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ («ՌՈՈՒԴՔԵՅՐ ԱՍՍԻՍԹԱՆՍ») - «ԲԱԺԻՆ Դ»

Ապահովագրության պայմանագրի առարկան

6.1. Կանոններում «Ռոուդքեյր Ասսիսթանս» ապահովագրության պայմանագրի ներքո հասկացվում է Կողմերի միջև համաձայնությունը, ըստ որի՝ Ապահովագրողը պայմանագրով սահմանված վճարի դիմաց (ապահովագրավճար) պայմանագրում նախատեսված պատահարների տեղի ունենալու դեպքում պարտավորվում է Ապահովադրին պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի սահմաններում հատուցել գումարային կամ բնաիրային տարբերակով ապահովագրական պատահարի արդյունքում պատճառված իրական վնասը:

Ապահովագրության օբյեկտը

6.2. Համաձայն Կանոնների «Բաժին Դ»-ի՝ Պայմանագրով ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի գույքային շահերը կապված ՏՄ-ի (ներառյալ ՏՄ-ին ամրակցված ԼՍ-ն) տիրապետման և/կամ օգտագործման ընթացքում առաջացած իրական վնասի կամ ծառայության ստացման անհրաժեշտության հետ:

Ապահովագրական պատահարներ և ապահովագրության լրացուցիչ պայմաններ

6.3. «Բաժին Դ»-ի ներքո, ապահովագրական պատահար են համարվում ՏՄ շահագործման հետևանքով դրա առանձին ագրեգատների, համակարգերի, հանգույցների և սարքերի անկանխատեսելի խափանում, որը թույլ չի տալիս ՏՄ-ին մեկնարկել կամ շարունակել ինքնուրույն ընթացքը՝ անկախ արտադրող/գործարանի կողմից տրամադրված երաշխիքի ժամկետից և առկայությունից, մասնավորապես.

- Անվադողերի վնաս,
- Մարտկոցի խափանում (այդ թվում՝ էլեկտրական սնուցման հետևանքով),
- ՏՄ վառելիքի պակաս,
- ՏՄ-ի այլ խափանում, որը թույլ չի տալիս ՏՄ-ին մեկնարկել կամ շարունակել ինքնուրույն ընթացքը, և ՏՄ-ն էվակուացնելու կարիք է առաջանում,
- Վարորդի՝ ինքնազգացողության անկումը: Այս դեպքում կիրառելի է միայն 6.4.6 կետով նշված ծառայությունը:

6.4. Ապահովագրության պայմանագրով կարող են նախատեսվել ստորև ռիսկերը և ծառայությունները, ինչի մասին հատուկ նշում է կատարվում Վկայագրում.

6.4.1. **«Վուլկանացում»** - շարժական վուլկանացման ծառայություն/անվադողերի վերանորոգում:

6.4.2. **«Էլեկտրասնուցում»** - մարտկոցի սնուցման ծառայություն բենզինային կամ դիզելային շարժիչով մեքենաների համար:

6.4.3. **«Էվակուացիա»** - մեքենայի գործարկման անհնարինության հետևանքով անհրաժեշտ էվակուատորի ծառայություն:

6.4.4. **«Վառելիքի առաքում»** – առաքվում է այնպիսի չափաքանակի բենզին կամ դիզվառելիք, որը հնարավորություն կտա ՏՄ-ն հասցնել մոտակա լիցքավորման կայան:

6.4.5. **«Տեղափոխություն նպատակակետ»** – ՏՄ վարորդի և ուղևորների տեղափոխություն վթարի վայրից, որի փաստով Ապահովագրողը ահազանգ է գրանցել, մինչև նրանց նպատակակետ: Տեղափոխություն նպատակակետ ծառայությունը հասանելի է ՀՀ տարածքում:

6.4.6. **«Սթափ վարորդ»** – վարորդի ինքնազգացողության անկման պարագայում տրամադրվում է սթափ վարորդի ծառայություն՝ Ապահովադրի կամ Լիազորված վարորդի համար, պայմանով, որ ծառայության մատուցման ընթացքում վերջինս ուղեկցելու է «սթափ վարորդին»: Վկայագրում հատուկ նշում է կատարվում, թե քանի անգամ է հասանելի ծառայությունը պայմանագրի ժամկետի ընթացքում: Սթափ վարորդ ծառայությունը հասանելի է ՀՀ մայրաքաղաք Երևանում և հարակից շրջաններում, որոնք սահմանափակվում են հետևյալ տարածքներով.

6.4.6.1. Արագածոտնի մարզ՝ Աշտարակ քաղաք, Ոսկևազ և Ագարակ գյուղեր,

6.4.6.2. Արմավիրի մարզ՝ Վաղարշապատ քաղաք, մինչև Մ3 միջպետական մայրուղի,

6.4.6.3. Արարատի մարզ՝ Մասիս քաղաք, Մարմարաշեն գյուղի վերջ,

6.4.6.4. Կոտայքի մարզ՝ Աբովյան քաղաք, Ակունք գյուղ, Գառնի, Նոր Հաճըն, Արզնի, Բյուրեղավան, Եղվարդ:

6.4.7. **«Անվադողերի փոխարինում»** - հատուցման է ենթակա Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ապահովագրված ՏՄ անվադողերի փոխարինման ծառայության և վերջինիս կազմակերպման ծախսերը՝ ծառայությունը Ապահովագրողի միջոցով կազմակերպելու դեպքում: Ծածկույթը գործում է տարեկան 2 (երկու) անգամ, որոնցից մեկը՝ ամառային անվադողերը ձմեռայինով փոխարինելիս, մյուսը՝ ձմեռային անվադողերը ամառայինով փոխարինելիս: Ծածկույթից օգտվելու համար հաճախորդը նախօրոք՝ երկու աշխատանքային օր առաջ, պարտավոր է ծանուցել Ապահովագրողին: Անվադողերի ձեռքբերման կամ վերոնշյալում չթվարկված այլ ծախսերը ենթակա չեն հատուցման: Անվադողերի փոխարինումը իրականացվում է կա՛մ (1) Ապահովագրողի կողմից հաստատված սպասարկման կենտրոնի աշխատակիցների կողմից Ապահովադրին հարմար վայր մոտենալու միջոցով, կա՛մ (2) Ապահովագրողի կողմից տրամադրված ուղեգրի հիման վրա՝ Ապահովագրողի կողմից հաստատված սպասարկման կենտրոններում, ընդ որում՝ Ապահովադիրը պարտավոր է նախապես ստանալ ուղեգիր Ապահովագրողից՝ ծառայությունից օգտվելու համար: Ապահովագրողն իրավունք ունի մերժել անվադողերի փոխարինման ծառայության հատուցման դիմումը, եթե տվյալ ծախսերը կատարվել են Ապահովադրի կողմից ինքնուրույն՝ առանց Ապահովագրողի նախապես համաձայնության և ուղեգրի տրամադրման: Ծառայության մատուցման եղանակը որոշում է Ապահովագրողը:

6.4.8. **«Տեխ.զննման կազմակերպում»** - հատուցման է ենթակա Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ապահովագրված ՏՄ-ի, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին օրենք»-ով ցուցված, տեխզննման կազմակերպման ծախսերը՝ լիցենզավորված տեխզննման կայաններում: Տեխզննման կայանը ընտրում է Ապահովագրողը: Տեխզննման արժեքը և վերջինիս անցկացման համար անհրաժեշտ այլ հարակից ծախսերը (օրինակ՝ գույքահարկ, բնապահպանական հարկ) ենթակա չեն հատուցման: Ծածկույթը գործում է տարեկան 1 անգամ:

6.4.9. **«Փոխարինող մեքենա»** - այն դեպքում, երբ «Բաժին Ա»-ով ապահովագրական պատահարի հետևանքով վնասված ՏՄ-ի հատուցման եղանակը ընտրվում է «վերանորոգում», Ապահովադիրը կարող է ընտրել հետևյալ ծածկույթներից մեկը.

6.4.9.1. Ապահովագրողը Ապահովադրին/Լիազորված վարորդին է տրամադրում «վարձակալված մեքենա»: Վարձակալված մեքենայի մակնիշը և մոդելը ընտրում է Ապահովագրողը: Վարձակալված մեքենայի շահագործման ընթացքում Ապահովագրողը չի կրում տվյալ մեքենայի վնասի, տույժերի, իրավախախտումների գծով որևէ պատասխանատվություն: Վարձակալված մեքենայի տրամադրման փաստը, կողմերի

իրավունքներն ու պարտավորություններն արձանագրվում է Վարձակալության Պայմանագրով:

Սույն ծածկույթով տրամադրված մեքենայի կամ մեքենաների ընդհանուր վարձակալության ժամկետը չի կարող գերազանցել Վկայագրում նշված ժամկետը ապահովագրության պայմանագրի ժամկետի ընթացքում: Սույն ծածկույթը տրամադրվում է 14 կամ 30 օրացուցային օրով, որը նշվում է Վկայագրում:

6.4.9.2. Ապահովագրողը Ապահովադրին/Լիազորված վարորդին հատուցում է վերջիններիս տեղափոխման ծախսերը: Ապահովագրողը իր հայեցողությամբ կարող է հատուցել տաքսի ծառայության, հեծանիվների, սկուտերների վարձակալության և այլ տեղաշարժման միջոցների ծախսերը, ինչպես նաև կարող է ընտրել այն մատակարարին կամ մատակարարներին, ում տրամադրած ծառայություններն են հատուցվող:

Պայմանագրի ընթացքում Ապահովադիրը կարող է ընտրել 6.4.9.1 և 6.4.9.2 կետերով նախատեսված ծառայություններից միայն մեկը: Սույն կետով տրամադրվող ծառայությունը ակտիվ է մինչև ՏՄ-ի վերանորոգման ավարտը:

Եթե Վկայագրում նշված է 14 օր, ուրեմն Ապահովադիրն իրավունք ունի ընտրել 6.4.9.2 կետով նախատեսված տարբերակը և օգտվել նշված ծառայություններից համախառն 14 օր՝ 50,000 ՀՀ դրամի սահմանում: 30 օր նշված լինելու պարագայում, Ապահովադիրն իրավունք ունի ընտրել 6.4.9.2 կետով նախատեսված տարբերակը և օգտվել նշված ծառայություններից համախառն 30 օր՝ 100,000 ՀՀ դրամի սահմանում:

6.4.10. **«Քիմ.մաքրում»** - հատուցման է ենթակա Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո ապահովագրված ՏՄ-ի սրահի մեկանգամյա քիմմաքրման ծառայության և դրա կազմակերպման ծախսերը՝ ծառայությունը Ապահովագրողի միջոցով կազմակերպելու դեպքում: Քիմմաքրումը կատարող կազմակերպությանը ընտրում է Ապահովագրողը: Ծածկույթը ակտիվանում է միայն Պայմանագրի շրջանակներում հատուցումների բացակայության և դրա վերակնքման պարագայում:

6.4.11. **«Փականագործ»** - մեքենայի դռան և/կամ բանալիի խափանման դեպքում փականագործը հնարավորության դեպքում կբացի դուռը: Նոր բանալիների ձեռքբերման, ինչպես նաև Ապահովադրի համաձայնությամբ ապահովագրված ՏՄ-ին հասցված վնասը, ինչպես նաև վերոնշյալում չթվարկված ծախսերը ենթակա չեն հատուցման: Փականագործ ծառայությունը հասանելի է ՀՀ մայրաքաղաք Երևանում և հարակից շրջաններում, որոնք սահմանափակվում են.

6.4.11.1. Արագածոտնի մարզ՝ Աշտարակ քաղաք, Ոսկևազ և Ագարակ գյուղեր,

6.4.11.2. Արմավիրի մարզ՝ Վաղարշապատ քաղաք, մինչև Մ3 միջպետական մայրուղի,

6.4.11.3. Արարատի մարզ՝ Մասիս քաղաք, Մարմարաշեն գյուղի վերջ

6.4.11.4. Կոտայքի մարզ՝ Աբովյան քաղաք, Ակունք գյուղ, Գառնի, Նոր Հաճըն, Արզնի, Բյուրեղավան, Եղվարդ:

6.4.12. **«Գիշերակաց»** - Եթե ապահովագրված ՏՄ-ն խափանվել և վնասվել է լիազորված վարորդի բնակության վայրից 100 և ավելի կմ հեռու և ենթակա չէ գործարկման, լիազորված վարորդի ցանկությամբ՝ ինքն ու մեքենայի ուղևորները կարող են գիշերել պատահարի վայրին մոտ որևէ հյուրանոցում: Ապահովագրողը հատուցում է սեփական ընտրությամբ հյուրանոցի ստանդարտ էկոնոմ համարում 1 օրվա գիշերակացի ծախսերը: Խիստ անհրաժեշտության դեպքում հնարավոր է ամրագրել 1-ից ավելի հյուրանոցային համար, որը նախօրոք ենթակա է հաստատման Ապահովագրողի ներկայացուցչի կողմից: Ծառայությունը գործում է ՀՀ և Վրաստանի Հանրապետության տարածքներում: Ապահովագրողը հատուցում է հյուրանոցում գիշերակացի ծախսերը՝ մինչև 200,000 ՀՀ դրամ սահմանաչափով:

6.4.13. **«Ավտոլվացում»** - հատուցման է ենթակա Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ապահովագրված ՏՄ-ի լվացման և դրա կազմակերպման ծախսերը՝ ծառայությունը Ապահովագրողի

միջոցով կազմակերպելու դեպքում: Ավտոլվացումը կատարող կազմակերպությանը ընտրում է Ապահովագրողը: Վկայագրում հատուկ նշում է կատարվում, թե քանի անգամ է հասանելի ծառայությունը պայմանագրի ժամկետի ընթացքում:

ԳԼՈՒԽ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ապահովագրության պայմանագրի կնքումը

7.1. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է Ապահովադրի կամ նրա ներկայացուցչի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա:

7.2. Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել որոշակի ժամկետով և երկարաձգման հնարավորությամբ՝ պայմանով, որ Ապահովադիրը պայմանագրի ավարտից 3 օր առաջ վճարի ապահովագրավճարի ամբողջ գումարը հաջորդող/պայմանագրի գործողության համար ակնկալվող/ժամանակաշրջանի համար: Ապահովադրի կողմից Պայմանագրի երկարաձգման հնարավորության վերաբերյալ համապատասխան նշում է կատարվում դրանում:

7.3. Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել Ապահովագրողի կողմից Ապահովադրի բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա կազմված ապահովագրության վկայագիրը Ապահովադրին տրամադրելու միջոցով:

7.4. Ապահովագրության պայմանագիրը կազմվում է գրավոր և կարող է կնքվել մեկ փաստաթղթի կազմման կամ Ապահովագրողից Ապահովադրին նրա գրավոր դիմումի հիման վրա Ապահովագրողի ստորագրությամբ ապահովագրական վկայագրի (վկայականի կամ այլ փաստաթղթի) շնորհման ճանապարհով:

Եթե ապահովագրական վկայագիրը կազմվել է այլ եղանակով, քան թղթային տեքստն է, օրինակ՝ էլեկտրոնային տարբերակով և Ապահովադիրը կատարել է վկայագրով սահմանված ապահովագրավճարի կամ ապահովագրավճարի առաջին մասի վճարումը կամ վկայագրում նշված էլեկտրոնային հասցեից վկայագրի ստացման, ծանոթացման և համաձայնության էլեկտրոնային նամակ է ուղարկել Ապահովագրողին, ապա էլեկտրոնային եղանակով կնքված վկայագիրն ունենում է նույն իրավական ուժը, որը կունենար թղթային ստորագրված օրինակը:

Ապահովագրության Պայմանագրի կնքման դեպքում Ապահովագրողը Ապահովադրին պարտավոր է տրամադրել Կանոնները կամ Կանոններից քաղվածք, որոնք ստեղծվել են Կանոնների դրույթների հիման վրա և վերաբերվում են ապահովագրության կոնկրետ ծրագրին (ապահովագրական պրոդուկտին), և որի հիման վրա էլ կնքվում է Պայմանագիրը (այդ մասին նշվում է Պայմանագրում):

Կանոնները Ապահովադրին կարող են տրամադրվել ինչպես թղթային տպված տարբերակով (այդ թվում՝ գրքույկի տեսքով), այնպես էլ համացանցում Կանոնների էլեկտրոնային հասցեն (URL) տրամադրելու, կամ Կանոնների ֆայլը Ապահովադրի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին ուղարկման միջոցով, կամ թվային կրիչներով (CD, DVD, և այլն), կամ Ապահովագրողի պաշտոնական www.efes.am կայքում Կանոնները տեղադրելու միջոցով:

Եթե Կանոնները տրամադրվել են այլ եղանակով, քան թղթային տեքստն է, Ապահովադիրը (Շահառուն) չի ազատվում Կանոններով նախատեսված ոչ մի պարտավորությունից: Ապահովադիրը ցանկացած ժամանակ իրավունք ունի դիմել Ապահովագրողին և ստանալ Կանոնների թղթային օրինակը:

7.5. Պայմանագրերը կարող են կնքվել, երկարաձգվել կամ դրանց դրույթները փոփոխվել էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով փաստաթղթեր փոխանակելու եղանակով, այն է՝ Ընկերության կողմից առաջարկ ստացած անձի կամ Ապահովադրի կողմից որոշակի ժամկետում առաջարկում նշված պայմանագրի պայմանները կատարելու ուղղությամբ գործողություններ ձեռնարկելու և համապատասխան ապահովագրավճարը վճարելու միջոցով:

7.6. Ապահովագրողն Ապահովադրի գրավոր (բանավոր) դիմումը ստանալուց հետո իրավունք ունի նրանից պահանջել ՏՄ-ի զննման հնարավորություն, լրացուցիչ տվյալների տրամադրում՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված այն հանգամանքների հետ, որոնք նշանակություն ունեն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա տեղի ունենալու դեպքում վնասի հնարավոր մեծության որոշման համար:

7.7. Ապահովադիրը Ապահովագրողի պահանջով պարտավոր է տրամադրել.

7.7.1. Իրավաբանական անձ Ապահովադրի հիմնադիր փաստաթղթեր,

7.7.2. Ապահովադրի կամ նրա անունից հանդես եկող անձի ինքնությունը հաստատող փաստաթուղթ,

7.7.3. Ապահովադրի ներկայացուցչի կարգավիճակը և լիազորությունների ծավալը հաստատող լիազորագիր կամ այլ փաստաթուղթ,

7.7.4. ՏՄ-ի գրանցման փաստաթղթեր,

7.7.5. Ապահովագրողի պահանջով ապահովագրական շահը հաստատող փաստաթղթեր,

7.7.6. Ապահովագրական ռիսկը գնահատելու համար Ապահովագրողին անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

7.8. Ապահովագրության պայմանագիր կնքելիս Ապահովադիրը (նրա ներկայացուցիչը) Ապահովագրողի պահանջով ՏՄ-ն պետք է ներկայացնի Ապահովագրողին զննման համար: Ընդ որում, զննման իրականացումը Պայմանագրով կարող է սահմանվել որպես Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբ:

7.9. Եթե ապահովագրության պայմանագրի կնքումից հետո հայտնի դառնա, որ Ապահովադիրը տրամադրել է կեղծ տեղեկություններ կամ թաքցրել է դրանք, ապա Ապահովագրողն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցման վճարումը, միակողմանի դադարեցնելու պայմանագիրը և պահանջելու հատուցել իր կրած ծախսերը:

7.10. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրության պայմանագրի կնքման հայտը (չկնքել կամ չվերակնքել ապահովագրության պայմանագիր):

Ապահովագրավճար

7.11. Ապահովագրավճարի չափը, վճարման կարգը և ժամկետները սահմանվում են Պայմանագրով:

7.12. Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի չափը որոշելիս բազային ապահովագրական սակագնի նկատմամբ կիրառել նվազեցնող կամ բարձրացնող գործակիցներ:

7.13. Տարաժամկետ վճարման կարգ սահմանող պայմանագրերի դեպքում Ապահովագրողը իրավունք ունի ապահովագրական հատուցումը վճարել միայն պայմանագրի ամբողջ ժամկետի համար ապահովագրավճարի վճարումից հետո:

7.14. Ապահովագրավճարը անկանխիկ եղանակով վճարելու դեպքում Ապահովադիրը պարտավոր է վճարման հանձնարարականում հղում կատարել հաշվի համարին և ամսաթվին, որի հիման վրա կատարվում է ապահովագրավճարի վճարումը, և/կամ ապահովագրության պայմանագրի (վկայագրի) համարին, որի համար իրականացվում է ապահովագրավճարի վճարում:

7.15. Անկանխիկ եղանակով վճարելու դեպքում ապահովագրավճարը համարվում է վճարված Ապահովագրողի հաշվարկային հաշվին մուտքագրվելու պահին:

7.16. Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովադրի կողմից ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) չվճարելու դեպքում Ապահովագրողը իրավունք ունի չսահմանել լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար, չծանուցել այդ մասին Ապահովադրին, միակողմանի դադարեցնել Պայմանագիրը, և ազատվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրավճարի հերթական մասի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով առաջացած վնասների դիմաց ապահովագրական հատուցումներ իրականացնելու պարտականություններից:

Ապահովագրողը իր հայեցողությամբ իրավունք ունի սահմանել ապահովագրավճարի վճարման լրացուցիչ ժամկետներ և այդ մասին ծանուցել Ապահովադրին: Լրացուցիչ ժամկետի սահմանման դեպքում Ապահովագրողը միևնույն է ազատվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրավճարի հերթական մասի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով առաջացած վնասների դիմաց ապահովագրական հատուցումներ իրականացնելու պարտականություններից:

7.17. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, մեկ տարուց պակաս ժամկետով կնքվող Պայմանագրերի դեպքում Պայմանագրի ապահովագրավճարը հաշվարկվում է ըստ հետևյալ աղյուսակի.

Ապահովագրության ժամկետ ամիսներով	Ապահովագրավճարը տոկոսներով տարեկան ապահովագրավճարի նկատմամբ
1	30 %
2	37 %
3	44 %
4	50 %
5	56 %
6	63 %
7	69 %
8	75 %
9	81 %
10	88 %
11	94 %
12	100 %

7.18. Ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրական հատուցումը վճարելուց հետո Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը (պատասխանատվության սահմանաչափը) նվազեցվում է կատարված ապահովագրական հատուցման չափով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

7.19. Ապահովագրական հատուցում ստանալուց հետո, Ապահովադիրը իրավունք ունի վերականգնել ապահովագրական գումարի (պատասխանատվության սահմանաչափի) չափը՝ Կանոնների համաձայն ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետի համար կնքելով լրացուցիչ պայմանագիր կամ համաձայնագիր և վճարելով լրացուցիչ ապահովագրավճար, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով (մեկ տարի ժամկետով պայմանագրերի համար).

$$Ա_{լր} = Հ_{վ} \times Ս_{գ} \times Ա_{մն} / 12$$

$Ա_{լր}$ - սկզբնական ապահովագրական գումարը վերականգնելու համար լրացուցիչ ապահովագրավճար
$Հ_{վ}$ – վճարված ապահովագրական հատուցման գումար
$Ս_{գ}$ - պայմանագրով գործող ապահովագրական սակագին
$Ա_{մն}$ – պայմանագրի չլրացած լրիվ ամիսների քանակ:

Պայմանագրի ուժի մեջ մտնելը, դրա գործողությունը

7.20. Ապահովագրության պայմանագիրը ուժի մեջ է մտնում ապահովագրության վկայագրում/պայմանագրում սահմանված ժամկետից:

7.21. Ապահովագրության պայմանագրով կարող է սահմանվել ապահովագրական պատահարների և/կամ հատուցման դիմումների առավելագույն քանակ՝ Պայմանագրի գործողության ամբողջ ժամկետի, յուրաքանչյուր ապահովագրական տարվա համար յուրաքանչյուր առանձին ապահովագրական ռիսկի,

բաժնի կամ ընդհանուր պայմանագրի համար: Սահմանափակման առկայության դեպքում դրա չափը, կիրառման շրջանակը և հաշվարկման կարգը նշվում են Պայմանագրում և/կամ Վկայագրում: Սահմանված առավելագույն քանակի սպառումից հետո հետագա դեպքերը Պայմանագրով հատուցման ենթակա չեն, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով և/կամ Վկայագրով:

Ռիսկի աստիճանի փոփոխություն

7.22. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին ներկայացված հանգամանքների յուրաքանչյուր փոփոխության մասին Ապահովադիրը պարտավոր է անհապաղ հայտնել Ապահովագրողին ցանկացած հնարավոր միջոցով (իսկ երեք աշխատանքային օրվա ընթացքում նաև գրավոր), այդ թվում նաև, եթե փոփոխությունը վերաբերում է հետևյալ հանգամանքներին.

7.22.1. ՏՄ-ի օտարում, գրավադրում, վարձակալության տրամադրում և/կամ տնօրինման և օգտագործման այլ սահմանափակում,

7.22.2. համարանշված մասերի փոփոխություն (թափք, շարժիչ, հաշվառման համարանիշ և այլն),

7.22.3. ՏՄ-ի բանալիների, հեռակառավարման վահանակի, հակաառևանգման համակարգի/սարքավորման կամ գրանցման փաստաթղթերի հափշտակություն, կորուստ,

7.22.4. ՏՄ-ի հաշվառումից հանում կամ հաշվառման վկայագրում (գրանցման այլ փաստաթղթերում) արտացոլված տեղեկությունների փոփոխություն,

7.22.5. ՏՄ-ի շահագործման, օգտագործման նպատակի փոփոխություն,

7.22.6. Լրացուցիչ սարքավորումների տեղադրում,

7.22.7. ՏՄ-ի համալրում հատուկ միջոցներով, այդ թվում՝ միջոցներով, որոնք գործարկում են շարժիչը հեռավորության վրա կամ ավտոմատ կերպով կամ տրամադրում են ՏՄ մուտքի հնարավորություն,

7.22.8. այլ փոփոխություններ, որոնք կարող են ազդեցություն ունենալ ապահովագրական ռիսկի աստիճանի վրա:

7.23. Ռիսկի աստիճանի փոփոխության դեպքում, այդ թվում նաև՝ Լիազորված վարորդի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման հետևանքով տեղի ունեցած պատահարի, 1 ՏՄ-ի գծով տվյալ ՏՄ-ի ապահովագրական գումարի 30% և ավելի գումարով ապահովագրական հատուցման վճարման, ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում 2 և ավելի պատահար տեղի ունենալու կամ ապահովագրության պայմանագրի վնասաբերությունը[2] 65%-ը գերազանցելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջել ապահովագրության պայմանագրի պայմանների վերանայում կամ վճարելու ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար:

7.24. Եթե Ապահովադիրը կանոնների 7.23 կետի հիմքերով Ապահովագրողի՝ ապահովագրության պայմանագրի պայմանները փոխելու կամ լրացուցիչ ապահովագրավճար վճարելու պահանջը մերժում է, ապա Ապահովագրողը կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով միակողմանի կարգով լուծել ապահովագրության պայմանագիրը:

7.25. Ապահովադրի կամ Շահառուի կողմից Կանոնների 7.22 կետում սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը և լուծել պայմանագիրը՝ առանց վերադարձնելու վճարված ապահովագրավճարը, ինչպես նաև պահանջել դրա հետ կապված վնասների հատուցում:

7.26. Կանոններով Ապահովագրողն իրավունք ունի պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ռիսկի աստիճանը մեծացնող հանգամանքների վերացման կամ ռիսկի աստիճանի նվազեցման համար

[2] Վնասաբերության հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով՝ Վնասաբերությունը = (վճարված հատուցումներ + հատուցման ենթակա գումարներ) / վաստակած ապահովագրավճար * 100: Վաստակած ապահովագրավճար = Ընդամենը ապահովագրավճար * պայմանագրի գործողության լրացած օրեր / պայմագրի ընդհանուր օրեր:

Ապահովադրին կամ Լիազորված վարորդին տալ հրահանգներ և սահմանել հրահանգների կատարման ժամկետ:

7.27. Ապահովագրողի կողմից տրված հրահանգների համաձայն և սահմանված ժամկետում Ապահովադրի կամ Լիազորված վարորդի կողմից ռիսկի աստիճանը մեծացնող հանգամանքների չվերացման կամ ռիսկի աստիճանի նվազեցման հրահանգների չկատարման դեպքում, համապատասխան հրահանգների կատարման վերջնաժամկետի ամսաթվից Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցման վճարելու պարտականությունից և իրավունք ունի միակողմանի լուծելու ապահովագրության պայմանագիրը՝ առանց վերադարձնելու ապահովագրավճարը:

Ապահովագրության պայմանագրի դադարումը

7.28. Ապահովագրության պայմանագրի գործողությունը դադարում է հետևյալ դեպքերում՝

7.28.1. ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետն ավարտվել է,

7.28.2. ապահովագրության պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի չափով Ապահովագրողը կատարել է ապահովագրական հատուցում վճարելու գծով իր պարտավորությունները,

7.28.3. Ապահովադիրը հրաժարվել է պայմանագրից, ընդ որում Ապահովադիրն իրավունք ունի հրաժարվել ապահովագրության պայմանագրից ցանկացած պահի՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին, պայմանով, որ հրաժարման պահին ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը չի վերացել,

7.28.4. Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, եթե մյուս Կողմը թույլ է տվել ապահովագրության պայմանագրի էական խախտում,

7.28.5. ապահովագրության պայմանագիրը լուծվել է Ապահովադրի և Ապահովագրողի փոխհամաձայնությամբ,

7.28.6. տեղի է ունեցել ապահովագրված ՏՄ-ի ամբողջական կորուստ, որն առաջացել է ապահովագրական պատահար չհանդիսացող հանգամանքների հետևանքով,

7.28.7. ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, Կանոններով և պայմանագրով նախատեսված այլ դեպքերում,

7.28.8. ՏՄ-ի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել է Ապահովադրից կամ Շահառուից կամ Պայմանագրով սահմանված Սեփականատերից տարբերվող այլ անձի անունով, կամ ՏՄ-ն հանվել է հաշվառումից,

7.29. Ապահովագրության պայմանագրի լուծման դեպքում Ապահովագրողը կիրառում է վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկման ստորև նշված երկու եղանակներից որևէ մեկը՝

7.29.1. «Ժամանակին համընթաց» (pro rata), այսինքն՝ Ապահովագրողը համամասնորեն վերադարձնում է ապահովագրության պայմանագրի չլրացած օրերի գծով վճարված ապահովագրավճարի և տրամադրված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը՝ առանց որևէ այլ մասհանումների,

7.29.2. «Կարճաժամկետ» (short term), այսինքն՝ Ապահովագրողը նետտո ապահովագրավճարից համամասնորեն վերադարձնում է ապահովագրության պայմանագրի չլրացած օրերի գծով վճարված ապահովագրավճարի և տրամադրված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը: Նետտո ապահովագրավճար է համարվում բրուտտո ապահովագրավճարի և գործառնական և պայմանագրի թողարկման համար կատարվող այլ ծախսերի՝ բեռնվածության տարբերությունը: Բեռնվածության գումարը կազմում է առաջին տարվա ապահովագրավճարի 30%-ը և յուրաքանչյուր հաջորդ տարվա ապահովագրավճարի 20%-ը:

7.29.3. Կարճաժամկետ եղանակով դադարեցման դեպքում Ապահովագրողի նախընտրությամբ կարող է կիրառվել Բեռնվածության ավելի ցածր մասնաբաժիններ, քան նշված է 7.29.2 կետում, կամ ընդհանրապես որևէ մասհանումներ չկատարվել:

7.29.4. Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, Պայմանագիրը համարվում է կնքված «Կարճաժամկետ» դադարեցման սկզբունքով:

7.30. Եթե ապահովագրության պայմանագրով նախատեսված է ապահովագրավճարի տարաժամկետ վճարման կարգ և ապահովագրության պայմանագիրը դադարեցվել է Ապահովադրի նախաձեռնությամբ (այդ թվում՝ ապահովագրավճարի հերթական մասի չկատարման հիմքով), ապա Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին վճարել պայմանագրի դադարեցման օրվա դրությամբ ապահովագրավճարի չվճարված մասի կամ պայմանագրի գործողության ընթացքում ստացված ապահովագրական հատուցումների հանրագումարի նվազագույնի չափով ապահովագրավճար (եթե նախքան պայմանագրի դադարեցման ամսաթիվը պայմանագրով վճարվել է ապահովագրական հատուցում, կամ Ապահովադիրը/Շահառուն դիմել է հատուցման համար):

7.31. ՏՄ-ի Առևանգման, հափշտակման կամ լրիվ ոչնչացման դեպքում ապահովագրության պայմանագրի դադարեցման ժամանակ ապահովագրավճարի վերադարձ չի իրականացվում:

7.32. 7.28.3 կետով սահմանված կարգով Ապահովադրի նախաձեռնությամբ ապահովագրության պայմանագրի լուծման դեպքում, Ապահովագրողն Ապահովադրին վերադարձնում է վճարված ապահովագրավճարը «կարճաժամկետ» մեթոդով, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

7.33. 7.28.8 կետով սահմանված հիմքերով դադարեցման դեպքում, եթե Ապահովադիրը ներկայացրել է հիմքերը հավաստող փաստաթղթեր (Օրինակ՝ առքուվաճառքի պայմանագիր), ապա Ապահովագրողն Ապահովադրին վերադարձնում է վճարված ապահովագրավճարը «ժամանակին համընթաց» մեթոդով՝ առանց բեռնվածության գումար պահելու:

7.34. Ապահովադրի կողմից պայմանագրի խախտման համար Ապահովագրողի նախաձեռնությամբ պայմանագրի լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում վճարված ապահովագրավճարները:

ԳԼՈՒԽ 8. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Ապահովադրի պարտականությունները ապահովագրական պատահարի դեպքում

8.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը կամ Լիազորված վարորդը կամ Շահառուն պարտավոր է.

8.1.1. տեղի ունեցած պատահարի մասին անհապաղ հայտնել (կախված պատահարի բնույթից) համապատասխան իրավասու մարմիններին,

8.1.2. ապահովագրական պատահարի մասին անպահաղ հայտնել Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին, տրամադրել պատահարի վերաբերյալ հնարավորինս ամբողջական տեղեկատվություն (պատահարի վայրը, ժամը, առաջացման հանգամանքները, պատահարի այլ մասնակցի և ՏՄ-ի տվյալները և այլն) և խիստ հետևել Ապահովագրողի ներկայացուցչի հրահանգներին,

8.1.3. ձեռնարկել բոլոր հնարավոր և ողջամիտ միջոցները հնարավոր վնասները կանխելու և նվազեցնելու համար՝ հետևելով Ապահովագրողի ցուցումներին, պատահարի վայրում սպասել Ապահովագրողի ներկայացուցչի ժամանելուն,

8.1.4. չլքել ապահովագրական պատահարի վայրը, չտեղաշարժել ՏՄ-ն և պատահարի հետ կապ ունեցող առարկաները մինչև Ապահովագրողի և համապատասխան իրավասու մարմնի ներկայացուցչի ժամանումը և ապահովագրական պատահարի փաստով բոլոր անհրաժեշտ տեղեկատվության արձանագրումը,

8.1.5. Ապահովադիրն (Լիազորված վարորդը) իրավունք ունի չսպասել Ապահովագրողի ներկայացուցչի ժամանելուն, եթե վերջինս հեռախոսով հայտնել է պատահարի վայր իր չժամանելու մասին և տվել է համապատասխան հետագա ցուցումներ,

8.1.6. մինչև Ապահովագրողի ներկայացուցչի ժամանումը ապահովագրական պատահարի վայրը միջոցներ ձեռնարկել պատահարի մասնակից մյուս ՏՄ-ի տվյալները, պատահարում ներգրավված այլ կողմերի և վկաների ինքնությունը (անունները, հասցեները և անձը հաստատող փաստաթղթի տվյալները) պարզելու ուղղությամբ,

8.1.7. Ապահովագրողի պահանջի առկայության դեպքում պահանջել իրավասու մարմիններից ՃՏՊ պատահարի հետաքննության նպատակով վարչական կամ քրեական վարույթի իրականացում,

8.1.8. ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահից 24 ժամվա ընթացքում չօգտագործել ոգելից խմիչք և Ապահովագրողի պահանջով անցնել սթափության վիճակի զննություն, եթե անգամ Լիազորված վարորդը անցել է նման զննություն,

8.1.9. մինչև պատահարի առաջացման մեջ կողմերի մեղավորության հարցի լուծումը (համապատասխան իրավասու մարմնի կողմից տրված եզրակացության կամ Ապահովագրողի կողմից նշանակված փորձաքննության արդյունքների հիման վրա) չընդունել մեղավորությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ հարուցված քրեական, քաղաքացիական կամ դատական վարույթով ապացուցվել է նրա մեղավորությունը,

8.1.10. ապահովագրական պատահարից անմիջապես հետո (կամ Ապահովագրողի կողմից սահմանված այլ ժամկետում) տրամադրել ՏՄ-ն Ապահովագրողի ներկայացուցչին զննման, փորձաքննության նպատակով, ինչպես նաև չօտարել, չհանձնել այլ անձանց և իրականացնել պատշաճ պահպանությունը հնարավոր հափշտակությունները կանխելու նպատակով, և Ապահովագրողի հետ համաձայնեցնել հատուցման կարգավորման հետ կապված քայլերը,

8.1.11. մինչև ապահովագրական հատուցման գործընթացի վերջնական կարգավորումը առանց Ապահովագրողի համաձայնության չիրականացնել ապահովագրված ՏՄ-ի վերանորոգման որևէ աշխատանք, պահպանել վնասված ՏՄ-ի մասերը կամ մնացորդները:

8.2. Ապահովադրի կամ Լիազորված վարորդի կողմից կանոնների 8.1 կետի պահանջները (պահանջներից որևէ մեկը) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը:

8.3. Ապահովագրված ՏՄ-ի վարորդը և Ապահովագրողի ներկայացուցիչը պատահարի վայրում ստորագրում են պատահարի հանգամանքների վերաբերյալ արձանագրություն:

8.4. Ապահովագրական պատահարի վայրում համապատասխան մարմինների՝ ոստիկանության, բժշկական ծառայության, փրկարարների, հրշեջ ծառայության և այլնի առկայության դեպքում վերջիններս կարող են ներգրավվել նախնական արձանագրության (ակտի) կազմմանը և ստորագրմանը:

Ապահովագրական պատահարի դեպքում Ապահովագրողին ներկայացվող փաստաթղթերը

8.5. Ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը կայացնելու համար Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել հետևյալ փաստաթղթերի բնօրինակները.

8.5.1. ապահովագրական հատուցման գրավոր կամ էլեկտրոնային դիմում պատահարի հանգամանքների մանրամասն նկարագրությամբ,

8.5.2. ապահովագրության վկայագիր (պայմանագիր),

8.5.3. անձը հաստատող փաստաթուղթ (իրավաբանական անձի դեպքում պետական գրանցման վկայականը ղեկավար անձի տվյալները պարունակող ներդիրով),

8.5.4. ապահովագրական պատահարի պահին ՏՄ-ն վարող անձի անձնագիրը և վարորդական վկայականը,

8.5.5. ապահովագրված ՏՄ-ի գրանցման փաստաթղթերը, ՏՄ-ի տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքը հավաստող փաստաթղթեր,

8.5.6. ապահովագրական պատահարի պահին ՏՄ-ի վարորդի կողմից ալկոհոլի, թմրանյութերի, տոքսիկ կամ հոգեմետ նյութերի օգտագործման փաստի վերաբերյալ անցկացված քննության փաստաթղթերը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրողի ներկայացուցիչն ազատել է վարորդին նման քննությունն անցնելու պարտականությունից,

8.5.7. Ապահովագրողն իրավունք ունի իր հայեցողությամբ ստուգելու ապահովագրված ՏՄ-ի օգտագործման նպատակի վերաբերյալ Ապահովադրից կամ Շահառուից ստացված տեղեկատվությունը, այդ թվում՝ պահանջելու համապատասխան իրավասու մարմնի կողմից, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության

Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ), Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) կամ տաքսի ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից տրամադրված տեղեկանք,

8.5.8. ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը հաստատող փաստաթուղթ՝ տրամադրված համապատասխան իրավասու մարմնի կողմից (ՏՄ-ի վնասման դեպքում ճանապարհային ոստիկանության կողմից տրամադրված սահմանված ձևի տեղեկանք, ինչպես նաև վարչական իրավախախտման գործով կազմված արձանագրություն և տեղեկանք)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան փաստաթուղթը կազմել է Ապահովագրողի լիազորված փորձագետը և ազատել Ապահովադրին նման փաստաթղթի ներկայացման պարտականությունից,

8.5.9. Հրդեհի դեպքում՝ համապատասխան իրավասու մարմնի կողմից կայացված որոշումը/տեղեկանքը կամ դրա պատճենը, որը առնվազն պետք է պարունակի հրդեհի պատճառների, դրա արդյունքում վնաս պատճառված գույքի մասին տեղեկատվություն,

8.5.10. Ապահովագրողի պահանջով վնասի չափը հաստատող փաստաթղթեր,

8.5.11. երրորդ անձի կողմից ապահովագրված ՏՄ-ին վնաս հասցված լինելու դեպքում հաղորդվում են վերջինիս տվյալները և ապահովագրական պատահարի մասնակից ՏՄ-ի տվյալները,

8.5.12. ՀՀ տարածքից դուրս տեղի ունեցած պատահարների դեպքում Ապահովադիրը/Շահառուն պարտավոր է տրամադրել պատահարի տեսանկարահանումը՝ արձանագրված կամ ՏՄ մեջ տեղադրված, կամ արտաքին տեսանկարահանող սարքի միջոցով: Պահանջը չկատարելու դեպքում Ապահովագրողը իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը:

8.5.13. Բաժին Բ-ով ապահովագրական պատահարի դեպքում՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով և «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ՀԿ խորհրդի կողմից հաստատված կանոններով սահմանված փաստաթղթերը,

8.5.14. այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ կլինեն Ապահովագրողին ապահովագրական հատուցման մասին որոշում կայացնելու համար, ներառյալ պետական կամ մասնավոր մարմինների կողմից տրամադրվող տեղեկանքները (ՊԵԿ, նախարարություններ, տաքսի ծառայություններ և այլն): Ընդ որում ներկայացված փաստաթղթերը պետք է բացահայտեն Ապահովագրողի համար փոխադարձ կնքված Պայմանագրով նախատեսված ռիսկի ներքո գտնվող իրադարձության հանգամանքները և պատճառները:

8.6. Ապահովագրված ՏՄ-ի Առևանգման դեպքում 8.5-րդ կետով սահմանված փաստաթղթերից բացի Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին լրացուցիչ ներկայացնել հետևյալ փաստաթղթերի բնօրինակները.

8.6.1. ՏՄ-ի գրանցման փաստաթղթերը (գրանցման վկայականը, ՏՄ-ի հաշվառման վկայագիրը, դրանց փոխարինող փաստաթղթերը), ինչպես նաև տվյալ ՏՄ-ի փականների բանալիների բնօրինակների, հակաառևանգման էլեկտրոնային համակարգերի ակտիվատորների լրիվ հավաքածուն: Այն դեպքում, երբ ՏՄ-ի գրանցման վկայականը և/կամ անձնագիրը կցված են քրեական գործի նյութերին, Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել տվյալ փաստաթղթերի՝ քննիչի կողմից հաստատված պատճենները,

8.6.2. Ապահովադիրը պետք է ներկայացնի Կանոնների 8.6.1 կետում նշված ՏՄ-ի գրանցման փաստաթղթերի բնօրինակը, իսկ ՏՄ-ի բանկում գրավադրված լինելու դեպքում՝ բանկի կողմից գրավի ձևակերպման ժամանակ ՏՄ-ի սեփականատիրոջը տրված գրանցման փաստաթղթի պատճենը՝ վավերացված բանկի կողմից: Բանկի կողմից հետագայում՝ ապահովագրական պատահարի վրա հասնելուց հետո, տրված ՏՄ-ի գրանցման փաստաթղթերի պատճենները սույն կետի իմաստով չեն հանդիսանա պատշաճ փաստաթուղթ:

8.6.3. Քրեական վարույթ նախաձեռնված լինելու դեպքում՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը, կամ տվյալ քրեական գործով վերջնական օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կամ պատահարից երկու ամիս անց վարութային գործողություններ նախաձեռնած անձի կողմից տրված տեղեկանք

քննության արդյունքների վերաբերյալ, ընդ որում երկամսա ժամկետով ապահովագրական հատուցման գործընթացը կասեցվում է:

8.6.4. Ապահովադրի (իսկ եթե Ապահովադիրը ՏՄ-ի սեփականատերը չէ, ապա նաև ապահովագրված ՏՄ-ի սեփականատիրոջ) պարտավորագիր առ այն, որ պարտավորվում է ՏՄ-ի հայտնաբերման դեպքում վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումը:

8.7. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է ապահովագրական հատուցման դիմում Ապահովագրողին ներկայացնել ապահովագրական պատահարի օրվանից հետո 3 ամսվա ընթացքում:

8.8. Եթե Ապահովադիրը (Շահառուն) Կանոնների 8.7 կետով սահմանված ժամկետում ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում չի ներկայացնում պատահարի հետևանքով անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում լինելու պատճառով, որն անհնարին է դարձրել նրա կողմից Ապահովագրողին սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական հատուցում ստանալու համար դիմելը, ապա եռամսյա ժամկետը սկսում է գործել ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում ներկայացնելն անհնարին դարձնող հանգամանքների վերացման կամ ապահովագրական պատահարի մասին տեղեկանալու օրվանից:

8.9. Ապահովադիրը և Շահառուն կրում են ապահովագրական հատուցում ստանալու համար սահմանված ժամկետում դիմելու անհնարինության 8.8 կետով սահմանված ապացուցման պարտականությունը:

8.10. Ապահովադիրը կամ Շահառուն պարտավոր է Կանոններով սահմանված ապահովագրական հատուցման համար փաստաթղթերը ներկայացնել ապահովագրական հատուցման դիմումի ներկայացման օրվանից երեք ամսվա ընթացքում: Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև 6 (վեց) ամիս, եթե Ապահովադիրը (Շահառուն) գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին: Նշված ժամկետների խախտման դեպքում Ապահովագրողն իրավունք ունի հատուցման դիմումին ընթացք չտալ և մերժել հատուցման վճարումը:

8.11. Ապահովագրողը իրավունք ունի ստուգել Ապահովադրի և/կամ Շահառուի (ներառյալ՝ Լիազորված վարորդների) կողմից հաղորդած տեղեկատվության արժանահատվությունը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անձամբ հետաքննել ապահովագրական պատահարի հանգամանքները՝ կատարելով անհրաժեշտ հարցումներ: Այս դեպքում Կանոնների 9.1 կետով սահմանված ժամկետը մինչև 365 օր ժամկետով կասեցվում է (բացառությամբ Ապահովագրողի նախաձեռնությամբ հարուցված քրեական կամ վարչական վարույթի իրականացումից, որի դեպքում նշված ժամկետը երկարաձգվում է մինչև այդ վարույթի ավարտը): Ապահովագրողը կասեցման որոշման դեպքում պարտավոր է այդ մասին գրավոր (ներառյալ՝ էլեկտրոնային նամակի միջոցով) ծանուցել Ապահովադրին/Շահառուին: 365 օրյա ժամկետի ավարտից հետո Ապահովագրողը 20 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է կայացնել ապահովագրական հատուցում վճարելու կամ հատուցման վճարումը մերժելու մասին որոշում:

ԳԼՈՒԽ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշումը, ապահովագրական հատուցման ժամկետները

9.1. Ապահովագրողն ապահովագրական պատահարի կարգավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո ոչ ուշ, քան 20 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է քննել հայտը և կայացնել ապահովագրական հատուցում վճարելու կամ հատուցման վճարումը մերժելու մասին որոշում:

9.2. Դրամական արտահայտությամբ ապահովագրական հատուցման դեպքում հատուցումը վճարվում է ապահովագրական հատուցման որոշման կայացումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

9.3. Ապահովագրական հատուցման մերժման դեպքում Ապահովագրողը կայացնում է պատճառաբանված որոշում, որը ինգօրյա ժամկետում պատվիրված նամակով կա՛մ Պայմանագրում, կա՛մ Հատուցման դիմումում նշված էլեկտրոնային հասցեին ուղարկում է (կամ տրամադրում է առձեռն) Ապահովադրին (Շահառուին):

Ապահովագրական հատուցման իրականացման ընդհանուր սկզբունքները

9.4. Կանոններով հատուցման ենթակա գումարի հաշվարկը իրականացվում է՝ հաշվի առնելով.

- ապահովագրական պատահարի արդյունքում հասցված վնասի չափը,
- Ապահովագրողի պատասխանատվության սահմանաչափը (ապահովագրական գումարը),
- ապահովագրության «լրիվ», «ոչ լրիվ համամասնական» կամ «ոչ համամասնական» լինելը,
- ապահովագրական հատուցման համակարգը,
- ՏՄ-ի մաշվածությունը,
- չհատուցվող գումարը,
- ՏՄ-ի և ԼՍ-ի մնացորդային արժեքները:

9.5. ՏՄ վնասման, լրիվ կործանման կամ առևանգման (գողության) դեպքում Ապահովագրողը իրավունք ունի հաշվարկել ապահովագրական հատուցման չափը՝ հաշվի առնելով ՏՄ մաշվածությունը: Եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրված ՏՄ նկատմամբ կիրառվում են տարեկան մաշվածության հետևյալ տոկոսադրույքները, ընդ որում անիվների վնասների դեպքում կիրառվում են համապատասխան սյան մեջ նշված տարեկան մաշվածության տոկոսադրույքները.

Թողարկման տարեթվից հաշվարկված տարիք	*Մաշվածության տոկոսադրույք*	*Մաշվածության տոկոսադրույք (կիրառելի է միայն անիվների վնասների դեպքում)*
1-ին տարի	10%	10%
2 – 3 տարի	10%	20%
4 տարի	10%	30%
5 տարի	20%	40%
6 տարի	30%	50%
7 տարի	40%	60%
8 տարի	50%	60%
9 և ավելի տարի	60%	60%

Մաշվածությունը հաշվարկվում է սկսած ՏՄ թողարկման տարվանից մինչև ապահովագրական պատահարի առաջացման օրը (համամասնորեն ապահովագրական պայմանագրի գործողության ցանկացած օրվա համար):

Ավտոտրանսպորտային միջոցի վնասված բաղադրիչի ձեռքբերման արժեքի որոշման հիմքում հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետությունում ձևավորված օգտագործված պահեստամասերի շուկայում առկա հնարավորինս նույն տարիքի և մաշվածության գործարանային արտադրության բաղադրիչի արժեքը, դրա բացակայության դեպքում՝ գործարանային արտադրության համանման նոր բաղադրիչի արժեքը՝ մասհանելով վերոնշյալ աղյուսակում նշված մաշվածության տոկոսները, իսկ նախորդ երկուսի բացակայության դեպքում՝ ոչ գործարանային արտադրության համանման նոր բաղադրիչի արժեքը,
Ընդ որում՝

ա. եթե ապացուցվում է, որ վնասված բաղադրիչը եղել է համապատասխան ավտոտրանսպորտային միջոցից տարբերվող հնության (ավելի նոր կամ ավելի հին), ապա դրա ձեռքբերման արժեքի հաշվարկման համար կիրառվում է տվյալ բաղադրիչի տարիքին համարժեք տարիքի ավտոտրանսպորտային միջոցի բաղադրիչի գնահատման համար նախատեսված մեթոդաբանությունը,

բ. եթե ապացուցվում է, որ վնասված բաղադրիչը եղել է ոչ գործարանային արտադրության, ապա դրա ձեռքբերման արժեքի հաշվարկման համար հիմք է ընդունվում ոչ գործարանային արտադրության համանման բաղադրիչի արժեքը՝ առանց որևէ մաշվածություն մասհանելու,

Նշված մեթոդաբանությունը կիրառվում է և՛ ՏՄ վնասի գնահատման, և՛ վերջինիս վերանորոգման կազմակերպման դեպքում:

9.6. Այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի արդյունքում Ապահովադրին հասցված վնասը հատուցվում է երրորդ անձանց կողմից, Ապահովագրողը հատուցում է միայն հատուցման ենթակա գումարի և երրորդ անձանց կողմից իրականացված հատուցման գումարի տարբերության չափով:

9.7. Մեղավոր և/կամ այլ անձի կողմից ապահովագրված ՏՄ-ին հասցված վնասի ամբողջական կամ մասնակի հատուցման դեպքում Ապահովադիրը պարտավոր է վերադարձնել ապահովագրական հատուցումը: Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը, եթե մինչ համապատասխան որոշում կայացնելը իրավասու անձը ստացել է փոխհատուցում տրանսպորտային միջոցին պատճառված վնասների մասով:

9.8. Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա ՏՄ վնասի դեպքում, որն առաջացել է Կանոնների 3.18 կետով սահմանված հրդեհ ռիսկի ազդեցությամբ, կիրառվում է 30% ոչ պայմանական չհատուցվող գումար:

9.9. ՏՄ-ի վերանորոգման դեպքում, եթե ապահովագրության պայմանագրով նախատեսված է ոչ պայմանական չհատուցվող գումար, ապա Ապահովադիրը Ապահովագրողին վճարում է (ետ է վերադարձնում) չհատուցվող գումարին համարժեք գումարը:

9.10. Ապահովագրողն իրավունք ունի վերանորոգման իրականացումից կամ լրիվ ոչնչացման պայմանով հատուցումից հետո Ապահովադրից պահանջել իրեն փոխանցել վերանորոգման ընթացքում փոխարինված դետալները և հանգույցները (ՏՄ-ի մնացորդները): Ապահովադրի/Շահառուի կողմից սույն պահանջը չկատարելու դեպքում Ապահովագրողը իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակի մերժել հատուցումը, կամ չտրամադրված դետալի և/կամ հանգույցի իրական արժեքի չափով նվազեցնել հատուցման չափը:

9.11. Ապահովագրողն իրավունք ունի հատուցման ենթակա գումարը նվազեցնել ապահովագրության պայմանագրի ապահովագրավճարի չվճարված մասի չափով՝ անկախ ընտրված ապահովագրական հատուցման եղանակից:

Բաժին Ա-ի դեպքում ապահովագրական հատուցման ծավալը

Ապահովագրված ՏՄ-ի վնասման դեպքում հատուցման ծավալը

9.12. ՏՄ-ի վնասման դեպքում ապահովագրական հատուցումը կարող է իրականացվել հետևյալ եղանակներից մեկով՝

9.12.1. համարժեք գույքով (վնասված ՏՄ-ի վերանորոգման կազմակերպմամբ)

9.12.2. դրամական արտահայտությամբ:

9.13. Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրական պատահարի արդյունքում պատճառված վնասի հատուցման եղանակը ընտրվում է Ապահովագրողի կողմից, ընդ որում համարժեք գույքով (վնասված ՏՄ-ի վերանորոգման կազմակերպմամբ) տարբերակի

ընտրության դեպքում Ապահովագրողն է նաև ընտրում վերանորոգման եղանակը, վայրը, վերանորոգող կազմակերպությունը:

9.14. Ապահովադիրն իրավունք ունի դիմելու Ապահովագրողին՝ հատուցման եղանակը վերանայելու հայցով: Այնուամենայնիվ, Ապահովագրողը վերապահում է իր իրավունք ընտրելու ապահովագրական հատուցման եղանակը՝ համաձայն սույն Կանոնների 9.13 կետի:

9.15. 9.12.1 կետով սահմանված եղանակով՝ համարժեք գույքով (վնասված ՏՄ-ի վերանորոգման կազմակերպմամբ), հատուցումն իրականացվում է Ապահովագրողի կողմից տրված ուղեգրի կամ գրավոր (ներառյալ՝ էլեկտրոնային նամակի միջոցով), ինչպես նաև Ապահովագրողի պաշտոնական ձայնագրվող հեռախոսահամարով բանավոր տեղեկացման հիման վրա վնասված ՏՄ-ի վերանորոգման կազմակերպման միջոցով Ապահովագրողի գործընկեր ավտովերանորոգման կազմակերպություններում: Ապահովագրողի կողմից վերանորոգման ուղղորդման ամսաթվից հետո եռամսյա ժամկետում վնասված ՏՄ-ն վերանորոգման չներկայացնելու դեպքում Ապահովագրողը իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը: Ընդ որում Ապահովադիրը/Շահառուն նշված ժամկետի ավարտից հետո իրավունք չունի ներկայացնել հատուցման նոր դիմում (միևնույն ապահովագրական պատահարի վերաբերյալ):

9.16. 9.12.1 կետով սահմանված եղանակով հատուցման դեպքում վերանորոգման ծառայությունների համար վճարումն Ապահովագրողի կողմից ուղղակիորեն կատարվում է վերանորոգող կազմակերպությանը:

9.17. Ապահովագրողի կողմից 9.12.1 կետով սահմանված եղանակով հատուցումը կատարելու հնարավորության բացակայության դեպքում[3] Ապահովագրողն իրավունք ունի հատուցումը վճարել դրամական արտայտությամբ:

9.18. Առանձին դեպքերում Ապահովագրողի համաձայնությամբ ապահովագրված ՏՄ-ի վերանորոգումը կարող է կազմակերպվել Ապահովադրի կողմից ընտրված ավտովերանորոգման կազմակերպության կողմից:

9.19. 9.12.2 կետով սահմանված եղանակով (դրամական արտահայտությամբ) հատուցման իրականացման դեպքում ապահովագրական հատուցման մեծությունը որոշվում է Ապահովագրողի կամ Ապահովագրողի կողմից մատնանշած անկախ փորձագետի կողմից կազմված վնասի գնահատման հաշվետվության հիման վրա՝ ելնելով ՏՄ-ի զննության արդյունքներից:

9.20. Ապահովագրված ՏՄ-ի վնասման դեպքում ապահովագրության պայմանագրով հատուցվում է.

- Ապահովագրական պատահարի արդյունքում ՏՄ-ի վնասված և փոխարինման ենթակա դետալների և հանգույցների ձեռքբերման և տեղադրման արժեքը,
- ՏՄ-ի վերանորոգման համար օգտագործվող նյութերի արժեքը,
- Ապահովագրական պատահարի հետ կապված ՏՄ-ի վնասների վերանորոգման ծախսերը՝ բացառությամբ «լրիվ ոչնչացման» դեպքերի,
- ապահովագրված ՏՄ-ի և ԼՍ-ի փրկությանը, վնասների նվազեցմանն ուղղված անհրաժեշտ և նպատակահարմար ծախսերը՝ ներառյալ մինչև մոտակա պահպանության կամ վերանորոգման կետ վնասված ՏՄ-ի տեղափոխման ողջամիտ ծախսերը (մինչև 30,000 ՀՀ դրամ), եթե այն չի կարող շարժվել ինքնուրույն: Նշված ծախսերի կատարման դեպքում Ապահովադիրը և/կամ ՏՄ լիազորված վարորդը պարտավոր է ներկայացնել ծախսը հավաստող փաստաթղթեր,
- թաքնված վնասների և թերությունների վերացման ծախսերը, եթե փաստաթղթորեն հիմնավորված է, որ նշված վնասները և թերությունները առաջացել են ապահովագրական պատահարի հետևանքով:

9.21. Եթե տեխնիկապես հնարավոր չէ կամ տնտեսապես աննպատակահարմար է վերականգնել ապահովագրական պատահարի արդյունքում վնասված ՏՄ-ի որևէ դետալ կամ հանգույց, ապա

[3] Նշված եղանակով հատուցումն իրականացնելու հնարավորության բացակայության որոշումը կայացնում է Ապահովագրողը:

պատճառված վնասի չափի մեջ հաշվարկվում է համանման դետալի, ագրեգատի կամ հանգույցի ձեռքբերման և տեղադրման արժեքը, իսկ ապահովագրական հատուցումը ՏՄ-ի վերանորոգման տարբերակով իրականացվելու դեպքում վերանորոգող կազմակերպության կողմից ՏՄ-ի վրա տեղադրվում է համանման դետալ:

9.22. Ապահովագրական պատահարի արդյունքում վնասված պահեստամասերը և դետալները փոխարինվում են բացառապես այն դեպքում, երբ դրանք վերանորոգման արդյունքում չեն կարող բերվել հետագա օգտագործման համար պիտանի վիճակի (մինչև ապահովագրական պատահարը եղած վիճակին մոտ վիճակի) կամ դրանց վերանորոգումը Ապահովագրողի կողմից համարվում է տնտեսապես աննպատակահարմար:

9.23. Ցանկացած դեպքում, եթե վնասված և փոխարինման ենթակա հանգույցը կամ դետալը եղել է ոչ գործարանային արտադրության, ապա վնասի գնահատման հիմքում դրվում են ոչ գործարանային արտադրության հանգույցի կամ դետալի արժեքը:

9.24. Վնասված և փոխարինման ենթակա հանգույցների կամ դետալների, վերանորոգման համար օգտագործվող նյութերի արժեքները հաշվարկում են՝ հիմք ընդունելով Ապահովագրողի գործընկեր (Ապահովագրողի հետ համագործակցող) կազմակերպությունների (համանման ապրանքների առքուվաճառքով զբաղվող և/կամ ավտովերանորոգող կազմակերպությունների) կողմից տրամադրված գները:

9.25. Ապահովագրված ՏՄ-ի վերանորոգման ծախսերը հաշվարկվում են Ապահովագրողի գործընկեր ավտովերանորոգող կազմակերպությունների կողմից տրամադրված գների հիման վրա:

9.26. ՀՀ հանգույցների կամ դետալների շուկայում վնասված և փոխարինման ենթակա հանգույցների կամ դետալների բացակայության դեպքում Ապահովագրողը հատուցում է դրանց՝ շուկայական արժեքով ձեռքբերման, փոխադրման և մաքսազերծման ողջամիտ ծախսերը:

9.27. 9.26 կետում նշված փոխադրման ծախսերը հաշվարկելիս Ապահովագրողը հիմք է վերցնում փոխադրման իրականացման համար անհրաժեշտ և նվազագույն ծախսերը, որոնց մեջ չեն ներառվում փոխադրումը կարճ ժամկետներում իրականացնելու և/կամ այլ լրացուցիչ ծառայությունների վճարները:

9.28. Վերանորոգման աշխատանքների ընթացքում թաքնված վնասների և թերությունների հայտնաբերման դեպքում Ապահովադիրը պարտավոր է մինչև դրանց վերացումը գրավոր տեղեկացնել դրանց մասին Ապահովագրողին:

9.29. Ապահովագրողը չի հատուցում թաքնված վնասների և թերությունների վերացման ծախսերը, եթե դրանք իրականացվել են առանց իր հետ համաձայնեցնելու:

9.30. Պատահարի արդյունքում վնասված տրանսպորտային միջոցը վերանորոգումից հետո մինչև հաջորդ ապահովագրական պատահարը պետք է ներկայացվի Ապահովագրողին զննման նպատակով, հակառակ դեպքում հետագայում վնասված դետալների գծով ներկայացված ապահովագրական հատուցման հայտերը չեն քննարկվի և այդ հայտերի գծով ապահովագրական հատուցում չի իրականացվի, իսկ ՏՄ-ի ամբողջական ոչնչացման, հափշտակման կամ Առևանգման դեպքում ապահովագրական հատուցման տրամադրման ժամանակ վնասվածքների և մաշվածության գումարը կհանվի հատուցման գումարից՝ Ապահովագրողի հաշվարկների համաձայն:

Ապահովագրված ՏՄ-ի և/կամ ԼՍ-ի լրիվ ոչնչացման դեպքում հատուցման ծավալը

9.31. ՏՄ-ի և/կամ ԼՍ-ի լրիվ ոչնչացման դեպքում, երբ ՏՄ-ի և/կամ ԼՍ-ի վերանորոգման արժեքը (ներառյալ ապահովագրության պայմանագրով հատուցման ենթակա ծախսերը) հավասար է կամ գերազանցում է ՏՄ-ի և/կամ ԼՍ-ի շուկայական արժեքի 80%-ը, ապահովագրական հատուցումը իրականացվում է «լրիվ ոչնչացման» պայմաններով:

9.32. Կողմերի համաձայնությամբ տոկոսը, որի դեպքում վնասը դիտվում է որպես «լրիվ ոչնչացում», կարող է փոփոխվել, սակայն մինչև վերանորոգման աշխատանքների սկիզբը:

9.33. «Լրիվ ոչնչացման» պայմանով հայտի կարգավորման որոշում ընդունելու համար Ապահովագրողը ՍՄ-ի նախնական զննության հիման վրա իրականացնում է վերանորոգման նախնական արժեքի գնահատում սեփական հաշվարկների հիման վրա կամ իր կողմից մատնանշած անկախ փորձագետի կողմից կազմված վնասի գնահատման հաշվետվության հիման վրա:

9.34. «Լրիվ ոչնչացման» պայմանով հատուցման դեպքում Ապահովագրողը վնասը հաշվարկում է հիմք ընդունելով ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ՍՄ-ի շուկայական արժեքը՝ նվազեցնելով ՍՄ-ի մնացորդային արժեքը, չհատուցվող գումարը, ինչպես նաև հաշվի առնելով Կանոնների 9.4 և 9.5 կետում նշված պայմանները:

9.35. Ապահովագրողի համաձայնությամբ «Լրիվ ոչնչացման» պայմանով ապահովագրական հատուցումը հնարավոր է իրականացնել առանց ՍՄ-ի մնացորդային արժեքը նվազեցնելու, եթե ՍՄ-ի մնացորդները Ապահովադիրը փոխանցում է Ապահովագրողին:

9.36. Կանոնների 9.35 կետով սահմանված կարգով ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովադրի կողմից ՍՄ-ի հաշվառումից հանելուց, մաքսազերծելուց (հաշվառումից հանելու և մաքսազերծման ծախսերը կրում է Ապահովադիրը) և Ապահովագրողին նոտարական վավերացմամբ լիազորագրի (Ապահովագրողի կողմից հաստատված բովանդակությամբ) տրամադրումից հետո:

9.37. Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելիս պահում է կատարում պայմանագրով սահմանված ապահովագրավճարի և այդ պահի դրությամբ վճարված ապահովագրավճարի տարբերության չափով:

ՍՄ-ի և/կամ ԼՍ-ի հափշտակության կամ Առևանգման դեպքում հատուցման ծավալը

9.38. Ապահովագրված ՍՄ-ի և/կամ ԼՍ-ի Առևանգման դեպքում ապահովագրական հատուցումը հաշվարկում է ապահովագրական հատուցման որոշման կայացման օրվա դրությամբ ապահովագրված ՍՄ-ի և/կամ ԼՍ-ի շուկայական արժեքի չափով՝ նվազեցնելով պայմանագրով սահմանված չհատուցվող գումարը, ինչպես նաև հաշվի առնելով Կանոնների 9.4 կետով սահմանված պայմանները:

9.39. Ապահովագրված ՍՄ-ի հափշտակության դեպքում Ապահովագրողի ընտրությամբ դրամական հատուցման փոխարեն ապահովագրական հատուցումը կարող է իրականացնել համարժեք գույքով՝ տրամադրելով նույն մակնիշի, մոդելի և տարեթվի համարժեք ՍՄ :

9.40. Հափշտակված կամ Առևանգված ՍՄ-ի դիմաց հատուցումը իրականացվում է հափշտակության փաստով հարուցված քրեական գործի նախաքննության ավարտից, իսկ քրեական գործը դատարան ուղարկելու դեպքում՝ կայացված դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

9.41. Առանձին դեպքերում Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնությամբ կարող են նախատեսվել 9.40 կետում սահմանված ապահովագրական հատուցման իրականացման ժամկետներից ավելի վաղ ժամկետներ:

9.42. Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա.

9.42.1. եթե ՍՄ-ի հափշտակության կամ առևանգման պահին ՍՄ-ն համալրված է եղել հակաառևանգման (էլեկտրոնային պահպանման) համակարգով, ապահովագրական հատուցման մեծությունը նվազեցվում է ապահովագրական գումարի 5%-ի չափով,

9.42.2. եթե ՍՄ-ի հափշտակության կամ առևանգման պահին ՍՄ-ն համալրված չի եղել հակաառևանգման էլեկտրոնային պահպանման համակարգով կամ այդ համակարգը եղել է անջատված (գտնվել է ոչ աշխատանքային ռեժիմում) կամ շարքից դուրս եկած, ապահովագրական հատուցման մեծությունը նվազեցվում է ապահովագրական գումարի 10%-ի չափով:

9.43. Եթե ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ ՍՄ-ի առաջնային զննության ընթացքում ՍՄ-ն համալրված չի եղել էլեկտրոնային պահպանման համակարգով, պայմանագրի գործողության

ընթացքում նման համակարգ տեղադրելու դեպքում Ապահովադիրը պարտավոր է այդ մասին ծանուցել Ապահովագրողին և ՏՄ-ն ներկայացնել լրացուցիչ զննության, հակառակ դեպքում ՏՄ-ն կհամարվի էլեկտրոնային պահպանման (հակաառևանգային) համակարգով չհամալրված:

9.44. Կանոնների համաձայն էլեկտրոնային պահպանման համակարգի ներքո հասկացվում է էլեկտրոնային ձայնազդանշանային համակարգը կամ էլեկտրոնային հակաառևանգման համակարգը (այդ թվում՝ էլեկտրոնային իմոբիլայզերը):

9.45. Այն դեպքում, երբ հափշտակված կամ առևանգված ՏՄ-ն հայտնաբերվել է մինչև Առևանգում ռիսկի գծով կատարված հատուցումը, ՏՄ-ին հասցված վնասը դիտարկվում է որպես երրորդ անձանց անօրինական գործողությունների հետևանքով առաջացած և հատուցվում է համապատասխան կարգով:

9.46. Ապահովագրական հատուցումն իրականացնելուց հետո առևանգված կամ հափշտակված ՏՄ-ի հայտնաբերման դեպքում Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումը ՏՄ-ի հայտնաբերումից 14 օրվա ընթացքում:

Բաժին Բ-ի դեպքում ապահովագրական հատուցման ծավալը

9.47. Տրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրությամբ ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը հաստատվելու դեպքում Ապահովագրողը պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի սահմաններում իրականացնում է տուժած անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին հասցված վնասի հատուցում:

9.48. Ապահովագրական հատուցման չափը Ապահովագրողի կողմից որոշվում է պատճառված վնասի փաստը և չափերը հավաստող փաստաթղթերի հիման վրա:

9.49. Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, ապա գույքին վնաս հասցնելու դեպքում ապահովագրական հատուցման գումարի մեջ ներառվում են նաև ՃՏՊ վայրից, որի մեղավորը ոստիկանության արձանագրությամբ ճանաչվել է Ապահովադիրը (Լիազորված վարորդը), երրորդ անձի ՏՄ-ի մոտակա վերանորոգման կայան կամ ժամանակավոր պահպանման վայր տեղափոխման ողջամիտ ծախսերը, եթե նշված ՏՄ-ն ստացել է այնպիսի վնասներ, որոնց դեպքում դրանց շահագործումն արգելվում է կամ տեխնիկապես անհնար է:

9.50. Ապահովագրական հատուցման չափը որոշելու վերաբերյալ տուժած անձանց հետ փոխադարձ ընդունելի համաձայնության չգալու դեպքում հատուցման ենթակա վնասի չափը սահմանվում է դատական ակտերով:

9.51. Վնասների նվազեցման կամ դատավարության հետ կապված ծախսերը ենթակա են հատուցման, եթե նշված ծախսերը իրականացվել են համաձայն Ապահովագրողի գրավոր ցուցումների կամ նրա գրավոր համաձայնությամբ:

9.52. Յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով ապահովագրական հատուցումը չի կարող գերազանցել ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի մեծությունը:

9.53. Եթե ապահովագրական պատահարի պահին ապահովագրված ՏՄ-ի գծով առկա է եղել կամ օրենքի պարտադրանքի ուժով պետք է կնքված լիներ տրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության այլ պայմանագիր, ապա Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցումը միայն նման ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարները գերազանցող վնասների գծով:

9.54. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին գրավոր տեղեկացնել բոլոր գործող ապահովագրության պայմանագրերի մասին՝ նշելով ապահովագրական ընկերությունների անվանումները, ապահովագրված ռիսկերը և ապահովագրական գումարները:

9.55. Եթե տուժած անձանց հասցված վնասը ենթակա է հատուցման ոչ միայն Ապահովադրի (Լիազորված վարորդի), այլև այլ անձանց կողմից, որոնք մեղավոր են ապահովագրական պատահարի առաջանալու մեջ, ապա Ապահովագրողը հատուցում է միայն տուժողին հատուցման ենթակա ընդհանուր գումարի և այլ մեղավոր անձանց կողմից վճարման ենթակա գումարի տարբերության չափով:

9.56. Եթե Կանոնների համաձայն՝ հատուցման ենթակա գույքին պատճառված վնասներ են կրել մեկից ավելի անձինք, և այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարը, ապա այդ անձանցից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվում են վնասների ընդհանուր գումարում նրանց գույքին պատճառված վնասների չափերին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի՝ Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

9.57. Եթե Կանոնների համաձայն՝ հատուցման ենթակա անձնական վնասներ են կրել մեկից ավելի անձինք, և այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարը, ապա նրանցից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվում են վնասների ընդհանուր գումարում նրանց պատճառված անձնական վնասների չափերին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

9.58. Կանոնների համաձայն՝ Ապահովադրի կողմից իր պարտականությունների չկատարումը Ապահովագրողին տալիս է իրավունք մերժելու ապահովագրական հատուցման վճարումը:

9.59. Ապահովագրողն իրավունք ունի երկարաձգել վճարումների ժամկետները, եթե.

- նշանակված է ապահովագրական պատահարի արդյունքում պատճառված վնասի գնահատման լրացուցիչ փորձաքննություն,
- ապահովագրական պատահարի փաստով հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարույթ:

Բաժին Գ-ի դեպքում ապահովագրական հատուցման ծավալը

9.60. Տրանսպորտային միջոցի վարորդի և ուղևորների դժբախտ պատահարներից ապահովագրությամբ ապահովագրական պատահարի առաջացման դեպքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցում հետևյալ սահմանաչափերով.

- մահվան դեպքում՝ յուրաքանչյուր անձի համար սահմանված ապահովագրական գումարի 100%-ի չափով,
- ֆունկցիոնալության խորը սահմանափակման դեպքում՝ յուրաքանչյուր անձի համար սահմանված ապահովագրական գումարի 100%-ի չափով,
- ֆունկցիոնալության ծանր սահմանափակման դեպքում՝ Ապահովագրված անձի համար սահմանված ապահովագրական գումարի 75%-ի չափով,
- ֆունկցիոնալության միջին սահմանափակման դեպքում՝ Ապահովագրված անձի համար սահմանված ապահովագրական գումարի 50%-ի չափով:

9.61. ՏՄ-ի շահագործման ընթացքում ծագած ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած աշխատունակության ժամանակավոր կորստի դեպքում Կանոնների Բաժին Գ-ով վճարվում է ապահովագրական հատուցում յուրաքանչյուր անաշխատունակ օրվա համար սկսած 7-րդ օրվանից Ապահովագրված անձի համար սահմանված ապահովագական գումարի 0.2%-ի չափով, սակայն ոչ ավել, քան յուրաքանչյուր անձի համար սահմանված ապահովագրական գումարի 20%-ը:

9.62. ՏՄ-ի շահագործման ընթացքում ծագած ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած բժշկական ծախսերի դեպքում Պայմանագրով հատուցվում են ապահովագրության ժամկետում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով առաջացած ամբուլատոր և/կամ ստացիոնար բուժման,

մասնավորապես՝ ընդհանուր հիվանդասենյակի, վիրահատությունների, բժշկի կողմից նշանակված բժշկական ծառայությունների, ախտորոշիչ հետազոտությունների, դեղամիջոցների, վիրակապական, անշարժացնող միջոցների հետ կապված անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը: Պայմանագրի շրջանակներում բժշկական ծախսերը ենթակա են հատուցման Պայմանագրի Բաժին Գ-ով սահմանված ապահովագրական գումարի շրջանակներում, սակայն ոչ ավել, քան յուրաքանչյուր անձի համար 1,000,000 ՀՀ դրամը:

9.63. Պայմանագրով չեն հատուցվում ստորև նշված ծախսերը, բժշկական ծառայությունները.

- ԱՊՊԱ պայմանագրի շրջանակներում հատուցման ենթակա բժշկական ծառայությունների, դեղորայքի, բժշկական պարագաների հետ կապված ծախսերը:,
- ցանկացած տեսակի սննդի, սննդային և/կամ կենսաբանական ակտիվ հավելումների (վիտամիններ և այլն), կոսմետիկ կամ խնամքի պարագաների կամ հանքային աղերի ձեռքբերման ծախսեր,
- առանց բժշկական ցուցումների կատարված բժշկական ծառայություններ, դեղորայք, հետազոտություններ կամ բժշկական պարագաների ձեռքբերում,
- ՀՀ-ում չարտոնագրված դեղամիջոցների կամ բժշկական պարագաների ձեռքբերման ծախսեր,
- ՀՀ օրենսդրության համաձայն՝ պետության կողմից երաշխավորվող անվճար հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային բժշկական օգնության կամ սպասարկման ծառայությունների ցանկում ընդգրված բժշկական ծառայությունների, դեղորայքի, բժշկական պարագաների հետ կապված ծախսեր,
- ապահովագրության ժամկետի ավարտից 30 օր հետո կատարված բժշկական ծախսերը,
- ֆիզիոթերապևտիկ, վերականգնողական, սանատոր-առողջարանային միջոցառումներ կամ բուժում,
- ոչ ավանդական, այլընտրանքային (ոչ գիտական) բուժում ու ախտորոշման մեթոդներ՝ ասեղնաբուժություն, հոմեոպաթիա, Ֆոլիի մեթոդով ախտորոշում, բիոռեզոնանսային ախտորոշում և այլն, փորձարարական կամ հետազոտական մեթոդներով բուժում, կազդուրման ավանդական համակարգեր, հեռաբժշկության հետ կապված ծառայություններ,
- այնպիսի բժշկական ծառայություններից օգտվելու հետ կապված ծախսերը, որոնք ուղղակիորեն կապված չեն տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով առաջացած վնասվածքների կամ տոքսիկ ազեցության հետ,
- այնպիսի բժշկական ծառայությունների հետ կապված ծախսերը, որոնք կատարվել ապահովագրված անձի մոտ մինչև դժբախտ պատահարի տեղի ունենալն առկա հիվանդությունների սրացումների կամ բարդացումների գծով, ինչպես նաև դրանց սրացումների կամ բարդացումների կանխարգելման նպատակով,

9.64. Ապահովագրողն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժել ապահովագրական հատուցման վճարումը կատարված բժշկական ծախսերի գծով, եթե կատարված բուժումը (այդ թվում՝ դեղորայքային) և/կամ բուժական միջոցները, հետազոտությունները ՀՀ կամ միջազգային բժշկական ասոցիացիաների արձանագրություններով ճանաչված չեն որպես անհրաժեշտ տվյալ հիվանդության, վնասվածքի կամ առողջական վիճակի համար: Ապահովագրողն իրավունք ունի մատուցված ծառայության, դեղորայքային բուժման, կատարված կամ նշանակված հետազոտության անհրաժեշտությունն որոշելու նպատակով հարցում կատարել համապատասխան որակավորում ունեցող մասնագետներին (անհրաժեշտության դեպքում ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր մասնագետներին) և հիմք ընդունել նրանց եզրակացությունները:

9.65. Դժբախտ պատահարի հետևանքով բժշկական ծախսեր առաջանալու և/կամ ժամանակավոր անաշխատունակության դեպքում.

- ապահովագրական վկայագրի բնօրինակը,

- ապահովագրական հատուցում ստանալու դիմում (Ապահովագրողի կողմից սահմանված ձևով) ապահովագրական պատահարի մանրամասն նկարագրությամբ և ապահովագրական հատուցում ստանալու եղանակների նշմամբ (բանկային փոխանցումով),
- ժամանակավոր անաշխատունակության փակ թերթիկը (ներկայացվում է ժամանակավոր անաշխատունակության դեպքում),
- ոստիկանության, արտակարգ իրավիճակների, դատախազության, դատական կամ այլ իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթի բնօրինակը, որոնց իրավասության շրջանակներում է գտնվում տվյալ դժբախտ պատահարի հանգամանքների քննումը և հաստատումը,
- բժշկական հաստատության կնիքով և իրավասու անձի ստորագրությամբ հաստատված բժշկական փաստաթուղթ (էպիկրիզ, քաղվածք ամբուլատոր-բժշկական քարտից, բժշկի եզրակացություն, բժշկական հաստատության կողմից տրված տեղեկանք, հիվանդության պատմություն և այլն), որը պետք է պարունակի հաճախորդի գանգատները, կատարված լաբորատոր կամ գործիքային հետազոտությունները, վերջնական ախտորոշումը և նշանակված բուժումը, բժշկի անուն ազգանունը և կոնտակտային տվյալները,
- կատարված վճարումը հավաստող փաստաթղթերի՝ ՀԴՄ կտրոնի՝ ծախսերի մանրամասն բացվածքի հետ միասին (դրամարկղի մուտքի անդորրագրի (օրդեր) և այլն), կանխիկ վճարման հաշվի բնօրինակները,
- Դատական բժշկի եզրակացությունը, որով կհիմնավորվի և կհաստատվի ԴՊ-ի և ստացված մարմնական վնասվածքների միջև առկա պատճառահետևանքային կապը
- ապահովագրական հատուցում ստացող անձի ինքնությունը հավաստող փաստաթղթի բնօրինակը (Վրաստանի տարածքում տեղի ունեցած պատահարների դեպքում Ապահովագրված անձի անձնագրի բնօրինակը),
- ապահովագրական հատուցման որոշման կայացման համար այլ անհրաժեշտ փաստաթղթեր,

9.66. Ապահովագրական հատուցում ստանալու համար ներկայացված բոլոր բժշկական փաստաթղթերում պետք է ներառվեն Ապահովագրված անձի անուն ազգանունը, ծննդյան ամսաթիվը, տարիքը, հայտարարված պատահարի ամսաթիվը և հանգամանքները, նշանակված և իրականացված բուժումը, բուժման սկիզբը և ավարտը, կատարված բժշկական միջոցառումների անվանումները, բժշկի կողմից սահմանված ախտորոշումը՝ հաստատված բժշկական պրակտիկայում ընդունված հետազոտությունների մեթոդներով, բոլոր ախտորոշիչ հետազոտությունների (լաբորատոր, կլինիկական, լուսաճառագայթային և այլն) արդյունքները, իրականացված վիրահատության արձանագրությունը:

ԳԼՈՒԽ 10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

10.1. Ապահովագրողն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե Ապահովադիրը կամ Լիազորված վարորդը կամ Շահառուն (Տուժողը).

10.1.1. չի կատարել Կանոններով և ապահովագրության պայմանագրով սահմանված իր պարտականությունները,

10.1.2. չի ձեռնարկել հնարավոր և ողջամիտ գործողություններ՝ ապահովագրված ՏՄ-ի հնարավոր վնասները նվազեցնելու համար,

10.1.3. խախտել է Կանոններով սահմանված ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին դիմելու ժամկետները, և չի հիմնավորվել Կանոնների 8.8 կետում նշված հանգամանքների առկայությունը,

10.1.4. 8.7 և 8.10 կետերում սահմանված ժամկետում Ապահովագրողին չի ներկայացրել Կանոններով նախատեսված և ապահովագրական հատուցումը վճարելու որոշումն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը կամ ներկայացրել է փաստաթղթեր, որոնք կազմված են թերի կամ Կանոններով սահմանված պահանջների խախտմամբ,

10.1.5. լքել է պատահարի վայրը կամ ՃՏՊ-ի վայրից տեղաշարժել է ՏՄ-ն կամ պատահարի հետ կապ ունեցող առարկաները (կոտրված ապակու բեկորներ, ՏՄ-ի մասեր և այլն) կամ խուսափել է ալկոհոլի, թմրանյութերի կամ այլ հոգեմետ նյութերի օգտագործման փաստի վերաբերյալ քննություն անցնելուց կամ օգտագործել է ալկոհոլ, թմրանյութեր կամ այլ հոգեմետ նյութեր մինչև նման քննության անցնելը կամ նման քննություն անցնելու անհրաժեշտության բացակայության վերաբերյալ Ապահովագրողի որոշում կայացնելը,

10.1.6. ապահովագրության պայմանագիրը կնքելիս կամ դրա գործողության ընթացքում հայտնել է իրականությանը չհամապատասխանող, կեղծ տեղեկություններ կամ ապահովագրական պատահարի հետ կապված հանգամանքների վերաբերյալ հայտնել է անարժանահավատ տեղեկատվություն,

10.1.7. ՏՄ-ն շահագործել է ապահովագրության պայմանագրի կնքման պահին հայտարարված կամ ապահովագրության վկայագրում կամ դիմում-հարցաթերթիկում նշված օգտագործման նպատակից տարբեր նպատակով, ապահովագրված ՏՄ-ով իրականացրել է առևտրային գործունեություն (եկամտի ստացման նպատակով, այդ թվում նաև՝ որպես ուղևորներ երրորդ անձանց փոխադրում, բեռների փոխադրում), կամ ՏՄ-ն շահագործել է վարորդական դասընթացների (ուսումնական նպատակով) կամ մրցույթների նպատակով՝ Ապահովագրողին ապահովագրվող ՏՄ-ի օգտագործման այդպիսի նպատակի մասին նախապես գրավոր չտեղեկացնելով,

10.1.8. կատարել է այնպիսի գործողություններ, որոնց արդյունքում անհնարին է դարձել Ապահովագրողի կողմից ապահովագրական պատահարի հանգամանքների պարզմանն ուղղված գործողությունների իրականացումը (անհնարին է դարձել ապահովագրական պատահարի հետաքննության անցկացումը),

10.1.9. Ապահովագրողի կողմից սահմանված ժամկետում չի տրամադրել ՏՄ-ն Ապահովագրողի ներկայացուցչին զննման, փորձաքննության կամ վերանորոգման նպատակով կամ վնասված ՏՄ-ի վրա կատարել է կառուցվածքային փոփոխություններ (փոխել, վերանորոգել է վնասված դետալները և հանգույցները առանց Ապահովագրողի հետ համաձայնեցնելու): Ապահովադիրը պարտավոր է մինչև Ապահովագրողի կողմից գրավոր համաձայնություն կամ հատուցման որոշում ստանալը չօտարել ՏՄ-ն, չվերանորոգել և չենթարկել կառուցվածքային փոփոխությունների, այդ թվում վնասված մասերի ձևափոխում կամ ՃՏՊ արդյունքում առաջացած հետքերի վերացում:

10.1.10. առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության իրականացրել է երրորդ անձանց վնասների հատուցում, տվել խոստումներ, կատարել վնասների կամավոր հատուցման առաջարկություններ, լիովին կամ մասնակի ճանաչել է իր մեղավորությունը, կատարել որևէ գործողություն, ինչը կարող է վկայել պատահարի գործում իր պատասխանատվության ընդունման մասին, հրաժարվել է ՃՏՊ-ի հետաքննության նպատակով վարույթի իրականացումից, կամ երրորդ անձանց հակաօրինական գործողությունների հետևանքով պատճառված վնասների վերաբերյալ իրավապահ մարմիններում նախապատրաստվող նյութերով կամ քննվող քրեական գործով բողոք և/կամ նյութական պահանջ ներկայացնելուց:

10.2. Ապահովագրողն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժել ապահովագրական հատուցումը Առևանգված կամ առանց հափշտակելու նպատակի երրորդ անձանց կողմից ապօրինաբար տիրացված ՏՄ-ի համար, եթե.

10.2.1. Ապահովադիրը կամ Լիազորված վարորդը ապահովագրված ՏՄ-ի կանգառի ժամանակ կամ կայանված վիճակում բաց է թողել (բանալիով կամ հեռակառավարման վահանակով չի փակել) ՏՄ-ի դռները կամ պատուհանները ուղեխցիկում վարորդի չգտնվելու պարագայում:Ընդ որում տրանսպորտային միջոցը շահագործողի կողմից դրա դռները փակելու և/կամ ազդանշանային համակարգը միացնելու

հանգամանքները չհիշելու հայտարարությունը և/կամ նույն դեպքով նախաձեռնված պետական լիազոր մարմնին տրված բացատրությունը համարվում է, որ խախտվել են սույն կետի պահանջները՝ համարվում է, որ կայանված վիճակում բաց է թողել ՏՄ-ի դռները կամ պատուհանները ուղեխցիկում վարորդի չգտնվելու պարագայում,

10.2.2. Ապահովադիրը կամ Լիազորված վարորդը ապահովագրված ՏՄ-ի բանալիները և/կամ ՏՄ-ի մուտքի հնարավորություն տվող միջոցները (այդ թվում հեռակառավարման վահանակները, շարժիչը գործարկող միջոցները) և/կամ գրանցման փաստաթղթերը[4] (գրանցման փաստաթղթերից որևէ մեկը) թողել է ապահովագրված ՏՄ-ում կամ երրորդ անձանց համար հասանելի վայրում,

10.2.3. ավազակային հարձակումը կամ կողոպուտը կամ առանց հափշտակելու նպատակի երրորդ անձանց կողմից ՏՄ-ի ապօրինաբար տիրացումը տեղի են ունեցել Կանոնների համաձայն ՏՄ-ի վարելու իրավունք չունեցող անձի կողմից ՏՄ-ի վարելու, շահագործելու ընթացքում, կամ հափշտակությունը, գողությունը (Առևանգումը) կամ առանց հափշտակելու նպատակի երրորդ անձանց կողմից ՏՄ-ի ապօրինաբար տիրացումը տեղի է ունեցել այն տարածքներից, որտեղ ՏՄ-ն թողնվել է Կանոնների համաձայն ՏՄ-ն վարելու իրավունք չունեցող անձի կողմից,

10.2.4. Ապահովադիրը ապահովագրված ՏՄ-ի առևանգումից կամ հափշտակությունից հետո Ապահովագրողին չի տրամադրել ապահովագրված ՏՄ-ի օրիգինալ բանալիների, դռների փականները բացող միջոցների լրիվ կոմպլեկտը և գրանցման փաստաթղթերը, բացառությամբ այն դեպքերի, երբ.

- Ապահովադիրը նախօրոք՝ մինչև ապահովագրական դեպքի ի հայտ գալը, գրավոր տեղեկացրել է Ապահովագրողին ապահովագրված ՏՄ-ի բանալիների, գրանցման փաստաթղթերի (կամ դրանց փոխարինող փաստաթղթերի) կորստի մասին,
- ապահովագրված ՏՄ-ի գրանցման փաստաթղթերը և/կամ բանալիները ՏՄ-ի հետ հափշակվել են կողոպուտի կամ ավազակության արդյունքում,

10.2.5. պատահարը տեղի է ունեցել ՀՀ սահմաններից դուրս՝ անկախ Վկայագրում ինչ ապահովագրության տարածք է նշված:

10.3. Կանոններով չի հատուցվում վնասը, որն առաջացել է.

10.3.1. կրակի, դյուրավառ առարկաների հետ անզգույշ վարվելու հետևանքով ապահովագրված ՏՄ-ի, այդ թվում՝ ՏՄ-ի սրահի մասերի վնասումից կրակի բաց օջախի, այդ թվում՝ ծխելու հետևանքով,

10.3.2. ՏՄ-ի շահագործման ընթացքում տվյալ ճանապարհահատվածում սահմանված (թույլատրված) արագության ավելի քան 25 (քսանհինգ) տոկոսով գերազանցման հետևանքով,

10.3.3. ՏՄ-ի հանդիպակաց ուղեմասով, որտեղ արգելված է երթևեկությունը, կամ ընդհանրապես երթևեկությունը արգելող վայրերում երթևեկելու հետևանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ ՏՄ վարորդը փորձել է խուսափել առավել վտանգավոր կամ ավելի մեծ վնաս պատճառելուց, ինչը հաստատվել է ՃՈ եզրակացությամբ կամ պետական այլ լիազոր մարմնի ակտով, կամ եթե այդպիսի ցուցում ստացել է իրավասու մարմինների կողմից,

10.3.4. ՏՄ-ի լուսացույցի կարմիր արգելող ազդանշանի տակ մուտք գործելու հետևանքով, եթե այդպիսի ցուցում չի ստացել իրավասու մարմինների կողմից,

10.3.5. ՏՄ-ի արգելված վայրերում հետադարձ, հետընթաց կամ շրջադարձ կատարելու հետևանքով, եթե այդպիսի ցուցում չի ստացել իրավասու մարմինների կողմից,

10.3.6. այն դեպքում, երբ ՃՏՊ-ին նախորդող պահին կամ դրա ընթացքում վարորդի ուշադրությունը զբաղված է եղել բջջային հեռախոսով, ռադիոկապով կամ այլ նմանատիպ աքսեսուարներով կամ ՃՏՊ-ի ժամանակ տրանսպորտային միջոցը գտնվել է առանց համապատասխան կառավարման: Եթե առկա են հիմնավոր

[4] Կանոններով գրանցման փաստաթղթերի տակ հասկացվում են ՏՄ-ի հաշվառման վկայագիրը (այդ թվում նաև՝ ժամանակավոր) և սեփականության վկայականը :

կասկածներ, որ ՃՏՊ-ի ժամանակ տրանսպորտային միջոցը գտնվել է առանց համապատասխան կառավարման, կամ վարորդի ուշադրությունը զբաղված է եղել բջջային հեռախոսով, ռադիոկապով կամ այլ նմանատիպ աքսեսուարներով, Ապահովագրողն իրավունք ունի հատուցման մասին եզրակացությունը հետաձգել մինչև համապատասխան փաստերի ամբողջական պարզաբանումը, իսկ տեղեկատվության հաստատման դեպքում՝ մերժել ապահովագրական հատուցումը,

10.3.7. վտանգավոր վարման հետևանքով. տրանսպորտային միջոցի օգտագործման արձանագրված փաստեր այն նպատակներով, որոնք մեծացնում են վթարի ռիսկը (օրինակ՝ մրցարշավ, դրիֆտ): Դրիֆտ է համարվում՝ ոլորանների ոլորման տեխնիկան և ավտոմոբիլային սպորտի տեսակը, որը բնութագրվում է վերահսկվող դրիֆտի կիրառմամբ առավելագույն հնարավոր արագությամբ և ուղու հետագծի անկյան տակ երթևեկելը: Ընդ որում Դրիֆտ է համարվում ոչ միայն մրցարշավային կամ ցուցադրական միջոցառումների մասնակցությունը, այլ նաև վարորդի կողմից տրանսպորտային միջոցի դիտավորյալ կտրուկ արգելակումների կամ արագացման կամ արագացմամբ շրջադարձերի ցուցադրությունը,

10.3.8. հակահրդեհային անվտանգության, վտանգավոր իրերի և նյութերի պահպանման կամ տեղափոխման կանոնների խախտման դեպքում,

10.3.9. չբացահայտված պատճառներով առաջացած ՍՄ ինքնայրումը, էլեկտրասնուցման համակարգի խափանումների հետևանքով առաջացած հրդեհը,

10.3.10. ուղևորների քանակի և/կամ բեռնվածության սահմանային նորմերի խախտմամբ ՍՄ-ի շահագործման ընթացքում,

10.3.11. ՍՄ-ի և/կամ ԼՍ-ի շահագործման ժամանակ դրանց՝ արտադրող գործարանի կողմից նախատեսված շահագործման կանոնների խախտմամբ,

10.3.12. անսարքություններով ՍՄ-ի վարելու դեպքում, որի շահագործումը արգելվում է ՀՀ նորմատիվ ակտերով (ցանկացած դեպքում չի հատուցվում ՍՄ-ի անիվների, անվադողերի հետ կապված վնասը, եթե ՍՄ-ի շահագործումը ՀՀ նորմատիվ իրավական ակտերով արգելված է տվյալ անվադողերի կամ անվահեծերի անբավարար վիճակի պատճառով), այդ թվում՝ տեխնիկական զննություն չանցած ՍՄ-ի,

10.3.13. ՍՄ-ն ՀՀ ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված ժամանակահատվածում՝ նոյեմբերի 15-ից մինչև մարտի 31, ինչպես նաև այլ ամիսների կամ օրերի, երբ օդի ջերմաստիճանը ցածր է 0 °C-ից, ձմեռայինից[5] տարբեր՝ այդ թվում համասեզոնային, անվադողերով օգտագործելու,

10.3.14. Լիազորված վարորդ չհանդիսացող անձի կողմից ՍՄ-ի վարելու ընթացքում,

10.3.15. ալկոհոլի[6] կամ թմրանյութերի, ինչպես նաև տոքսիկ կամ սեդուկտիվ նյութերի ազդեցության տակ գտնվող անձի կողմից ՍՄ-ի վարելու ընթացքում,

10.3.16. Կանոնների 6.4.6 կետում նկարագրված «Սթափ վարորդ» ծառայությունից օգտվելուց հետո 8 ժամվա ընթացքում տեղի ունեցած պատահարները,

10.3.17. հակաօրինական գործողությունների, հանցագործության իրականացման համար ՍՄ-ի օգտագործման ընթացքում,

10.3.18. այն գոտիներում ՍՄ-ի օգտագործման ժամանակ, որտեղ պաշտոնապես հայտարարվել է արտակարգ իրավիճակ, անցկացվում են հանրահավաքներ, տեղի են ունեցել ժողովրդական հուզումներ կամ այն վայրերում, որտեղ իրականացվում են մասսայական անկարգություններ և այդ որակումը տրված է համապատասխան իրավապահ մարմինների կողմից,

10.3.19. այն անձանց կողմից ՍՄ-ի վարելու ընթացքում, որոնք ՀՀ օրենսդրության կամ Կանոնների համաձայն չունեն ՍՄ-ի վարելու իրավունք կամ չունեն համապատասխան կարգի վարորդական իրավունք (այդ

[5] Ձմեռային անվադողեր՝ ԱՄ-ի անվադողեր, որոնք հատուկ մշակված են տարվա ցուրտ ժամանակաշրջանում օգտագործելու համար, և որոնց վրա առկա է M+S և «Ձյան փաթիլ» նշանը, կամ «Ձյան փաթիլ» նշանը՝ այլ համադրությամբ: Միայն M+S նշանը առանց Ձյան փաթիլի չի համարվում ձմեռային անվադող:

[6] Կանոններում ալկոհոլի ազդեցության տակ հասկացվում է ալկոհոլի առկայությունը անձի օրգանիզմում սկսած 0.0001 mg/L-ից:

թվում՝ վարորդական իրավունքներից զրկված անձանց կողմից) կամ առանց հատուկ պարագաների (այդ թվում՝ ակնոցի) ՍՄ-ի վարելու ընթացքում այն անձի կողմից, ով, համաձայն վարորդական վկայականի, իրավունք չունի ՍՄ-ն վարել առանց տվյալ պարագայի,

10.3.20. Ապահովադրի, նրա ընտանիքի անդամների, ապահովագրված անձանց, Լիազորված վարորդի, Տուժողի, Շահառուի կամ այն անձանց, որոնց տրամադրության տակ Ապահովադրի համաձայնությամբ եղել է ապահովագրված ՍՄ-ն, ձեռնարկած դիտավորյալ գործողությունների (կամ դրանց իրականացման փորձի) կամ անգործության արդյունքում,

10.3.21. Ապահովադիրը կամ Լիազորված վարորդը ապահովագրված ՍՄ-ի կանգառի ժամանակ կամ կայանված վիճակում բաց է թողել (բանալիով կամ հեռակառավարման վահանակով չի փակել) ՍՄ-ի դռները կամ պատուհանները ուղեխցիկում վարորդի չգտնվելու պարագայում: Ընդ որում տրանսպորտային միջոցը շահագործողի կողմից դրա դռները փակելու և/կամ ազդանշանային համակարգը միացնելու հանգամանքները չհիշելու հայտարարությունը և/կամ նույն դեպքով նախաձեռնված պետական լիազոր մարմնին տրված բացատրությունը համարվում է, որ խախտվել են սույն կետի պահանջները՝ համարվում է, որ կայանված վիճակում բաց է թողել ՍՄ-ի դռները կամ պատուհանները ուղեխցիկում վարորդի չգտնվելու պարագայում:

10.4. Կանոններով չեն հատուցվում.

10.4.1. բարոյական վնասը, ածանցյալ և այլ ծախսերը, որոնք կարող են պայմանավորված լինել ապահովագրական պատահարով, այդ թվում՝ տուգանք, բաց թողնված օգուտ, վարձակալված ՍՄ-ի օգտագործման վճար, ապահովագրված ՍՄ-ի օգտագործման անհնարինության հետևանքով առաջացած ծախսեր, ՍՄ-ի վերանորոգման ժամանակ հյուրանոցում կայանելու վճար, գործուղման ծախսեր, պարապուրդ, վնասներ, այդ թվում՝ կապված երաշխիքային ժամկետի լրացման հետ, և այլն, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

10.4.2. ինչպես ամբողջական ՍՄ-ի, այնպես էլ նրա առանձին դետալների և հանգույցների բնական մաշվածությունը, ապրանքային կամ շուկայական արժեքի կորուստը, արտադրական (գործարանային) թերությունը, վնասը, որը պայմանավորված է գործարանային խոտանով, կամ խոտանով, որը առաջացել է վերանորոգման աշխատանքների ժամանակ,

10.4.3. ՍՄ-ի ագրեգատների կամ դետալների անհետացումը և/կամ կորուստը, երբ չկա հստակ կամ ակնհայտ արտաքին պատճառ: Սույն կետի ներքո հասկացվում է կորուստը, որտեղ չարտոնված մուտքի, գողության կամ պատահական վնասի նշաններ չկան և առկա չեն անօրինական գործողությունների իրականացման և/կամ արտաքին ազդեցության իրեղեն ապացույցներ կամ հավաստող փաստաթղթեր,

10.4.4. վնասը, որը հասցվել է ապահովագրական պատահարի ժամանակ ՍՄ-ում գտնվող իրերին կամ սարքավորումներին, եթե դրանց ապահովագրությունը չի նախատեսված ապահովագրության պայմանագրում,

10.4.5. ՍՄ-ի ագրեգատների կամ դետալների վերանորոգումը կամ փոխարինումը, որոնք վնասվել էին մինչև ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբը, կամ մինչև ապահովագրված ՍՄ-ն ապահովագրելը առկա վնասվածքների և թերությունների վերացման ծախսերը, եթե մինչև ապահովագրական պատահարի առաջանալը Ապահովադիրը Ապահովագրողին չի ներկայացրել զննության արդեն վերանորոգված ՍՄ-ն,

10.4.6. ՍՄ-ի ագրեգատների կամ դետալների վերանորոգումը կամ փոխարինումը, որոնց վնասումը ապահովագրական պատահարի արդյունք չէ, ինչպես նաև այն աշխատանքների իրականացումը, որոնց տեխնոլոգիական անհրաժեշտությունը չէր եղել (հարակից հարթությունների ներկում, վերանորոգման փոխարեն դետալների փոխարինում և այլն),

10.4.7. վնասը, որն ուղղակիորեն կապված չէ ապահովագրական պատահարի հետ, արտադրող գործարանի կողմից չնախատեսված տեխնոլոգիայով աշխատանքային ծախսումները,

10.4.8. ապահովագրված ՏՄ-ի գողության կամ լրիվ ոչնչացման դեպքում այն վնասների և դեֆեկտների վերացման ծախսերը, որոնց մասին մինչև ապահովագրական պատահարի առաջանալը Ապահովագրողը գրավոր չի տեղեկացվել,

10.4.9. ՏՄ քարշակման (բարձր լարման) մարտկոցին, տրանսպորտային միջոցի լիցքավորման համակարգին կամ դրանց հետ կապված բարձր լարման սնուցման և մալուխային բաղադրիչներին հասցված վնասը,

10.4.10. անիվների (այդ թվում՝ անվադողերի, անվահեծի, անվահեծի ծածկոցների կամ վրադիրների) վնասվածքը, այդ թվում՝ խազը, քերծվածքը, դեֆորմացիան, ճաքը, որը չի հանգեցնում տվյալ դետալի հետագա շահագործման անհնարարինությանը: Նշված վնասվածքները ենթակա են ՀՀ-ում առկա գործիքակազմով վերանորոգման՝ առանց գործարանային տեսքի վերականգնման երաշխավորության, ընդ որում դրա բացակայության կամ վերանորոգման անհնարինության դեպքում, սույն Կանոններով չի հատուցվում վնասված պահեստամասի փոխարինման ծախսը:

10.5. Ցանկացած դեպքում կանոններով հատուցման ենթակա չէ այն վնասը, որն առաջացել է.

10.5.1. ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրության տարածքից (երթուղուց) դուրս ՏՄ-ի օգտագործման դեպքում,

10.5.2. միջուկային պայթյունի ազդեցությամբ, ինչպես նաև ռադիացիայից կամ ռադիոակտիվ վարակից,

10.5.3. ահաբեկչական գործողությունների արդյունքում,պատերազմի, ռազմական գործողությունների, ինչպես նաև ռազմական հնարքների, զորաշարժերի և/կամ այլ ռազմական միջոցառումների արդյունքում,

10.5.4. քաղաքացիական պատերազմի, ցանկացած բնույթի քաղաքացիական ընդվզումների, խռովությունների կամ գործադուլների հետևանքով,

10.5.5. պետական մարմինների հրահանգով ապահովագրված ՏՄ-ի առգրավման, բռնագրավման, ռեկվիզիցիայի, դրա վրա արգելանք դնելու կամ ոչնչացնելու հետևանքով,

10.5.6. ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

10.6. Ապահովագրողն իրավունք ունի պահանջել վճարված հատուցման վերադարձ, եթե ապահովագրական հատուցման վճարումից հետո ի հայտ են գալիս ապահովագրական հատուցման վճարումը մերժելու Կանոններով կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքեր:

10.7. Ապահովագրողի կողմից հատուցման մերժումից հետո 6 ամսվա ընթացքում Ապահովադիրը (Շահառուն) իրավունք ունի ներկայացնել ապահովագրական հատուցման վերանայման հիմք հանդիսացող նոր երևան եկած հանգամանքներ: Նոր հանգամանքների ներկայացման կարգը և հետագա կարգավորման ժամկետները նույնն են, ինչ առաջին անգամ ապահովագրական հատուցման դիմում ներկայացնելու կարգն է:

ԳԼՈՒԽ 11. ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ

11.1. Ապահովագրական հատուցման արդյունքում վճարված հատուցման գումարի սահմաններում Ապահովագրողին անցնում է ապահովագրական պատահարի արդյունքում ծագած պահանջի իրավունքը, որն ուներ Ապահովադիրը (Շահառուն, Ապահովագրված անձը) վնասի համար պատասխանատու անձի նկատմամբ:

11.2. Ապահովադիրը (Շահառուն, Լիազորված վարորդը) պարտավոր է Ապահովագրողին փոխանցել բոլոր ապացույցները և փաստաթղթերը, հայտնել իրեն հայտնի ամբողջ տեղեկատվությունը և ձեռնարկել բոլոր միջոցները (մեղավոր կողմի ներկայությամբ վնասված ՏՄ-ն ներկայացնել լրացուցիչ զննության և այլն), որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին իրեն փոխանցված իրավունքների իրացման համար:

11.3. Եթե Ապահովադիրը հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասի համար պատասխանատու անձի նկատմամբ իր պահանջի իրավունքից կամ այդ իրավունքի իրացումը Ապահովագրողի կողմից անհնար է դարձել Ապահովադրի կամ Լիազորված վարորդի կամ Շահառուի մեղքով, ապա

Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցման կամ դրա մի մասի վճարման պարտականությունից և ստանում է ավել վճարած ապահովագրական հատուցման վերադարձի իրավունք:

ԳԼՈՒԽ 12. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1. Կանոններում և/կամ Պայմանագրում նշված պայմանները կարող են փոփոխվել (բացառվել կամ լրացվել) Կողմերի գրավոր համաձայնությամբ Պայմանագրի կնքման պահին կամ դրա գործողության ընթացքում, պայմանով, որ նման փոփոխությունները չեն հակասում գործող օրենսդրությանը:

12.2. Ապահովագրողն իրավունք ունի միակողմ՝ առանց Ապահովադրի համաձայնության փոփոխություն և/կամ լրացում կատարելու Կանոններում:

12.3. Կանոններում միակողմանի փոփոխություն և/կամ լրացում կատարելու դեպքում Ապահովագրողը պարտավոր է ոչ ուշ քան 15 օր առաջ այդ փոփոխությունների մասին գրավոր ծանուցել Ապահովադրին:

12.4. Կատարված փոփոխությունների և/կամ լրացումների հետ համաձայն չլինելու դեպքում Ապահովադիրն իրավունք ունի անմիջապես լուծելու ապահովագրության պայմանագիրը:

ԳԼՈՒԽ 13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

13.1. Կանոնների համաձայն կնքված ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի շրջանակներում Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Անհամաձայնության (համաձայնության չգալու) դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 14. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

14.1. Ապահովադիրը տալիս է իր համաձայնությունը այն մասին, որ Ապահովագրողը իր կողմից «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ապահովագրական ծառայությունների մատուցման, ինչպես նաև դրա հետ կապված կամ դրանից բխող անհրաժեշտ գործողությունների իրականացման, այդ թվում՝ ապահովագրական ռիսկերը գնահատելու, ապահովագրավճարի չափերը սահմանելու և/կամ Ապահովադրի կողմից ներկայացված անձնական տվյալների հավաստիությունը ստուգելու նպատակով հարցում կատարի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, այլ անձանց և կազմակերպություններին և նրանց տնօրինության տակ գտնվող բազաներից, այդ թվում՝ ՀՀ Բնակչության պետական ռեգիստրից, ստանա Ապահովադրի, իր ամուսնու/կնոջ, երեխայի և ծնողների վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ ՀԾՀ (չունենալու մասին տեղեկանք), սոցիալական քարտի ցուցիչ/ինդիկատոր, նկար, անուն(ներ) (հայերեն և անգլերեն), ազգանուն, նաև (հայերեն և անգլերեն), հայրանուն (հայերեն և անգլերեն), ծննդյան ամսաթիվ, սեռ, ծննդյան վայրի հասցե, երկրի անուն և կոդ, գրանցման/հաշվառման հասցե՝ երկիր, մարզ/տարածաշրջան, համայնք, փողոց, շինություն, բնակարան, բնակարան, անձը հաստատող փաստաթղթի տեսակ (այդ թվում՝ նախկին), համար, տրման ամսաթիվ, վավերականության ժամկետ, տրամադրող բաժին, քաղաքացիություն, երկրորդ քաղաքացիություն, ծննդյան վերաբերյալ տվյալներ, տեղակայման կոդ, ամուսնության և ամուսնալուծության վերաբերյալ տեղեկություններ, խնամակալի վերաբերյալ տվյալներ՝ անուն(ներ) (հայերեն և անգլերեն), ազգանուն (հայերեն և անգլերեն), հայրանուն (հայերեն և անգլերեն), ծննդյան ամսաթիվ, ՀԾՀ, խնամակալության հիմքը, երեխայի հայրության վերաբերյալ տվյալներ՝ անուն(ներ) (հայերեն և անգլերեն), ազգանուն (հայերեն և անգլերեն), հայրանուն (հայերեն և անգլերեն), ծննդյան ամսաթիվ, ՀԾՀ, հայրության ճանաչման հիմքը, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալությունում գրանցված գործադիր մարմնի ղեկավարի/հիմնադրի՝ սույն կետով սահմանված վերոնշյալ տվյալները, ինչպես նաև հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեն, տեղեկություններ հիմնադիր լինելու մասին, ինչպես նաև Ապահովադրին պատկանող ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն:

14.2. Ապահովադիրը, տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Ապահովագրողի կողմից ցանկացած պահի, առանց նախապես տեղյակ պահելու ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին տրամադրվի Կողմերի միջև կնքված ապահովագրության պայմանագրի շրջանակներում Ապահովագրողին հայտնի դարձած տեղեկությունները, որոնք «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն հանդիսանում են ապահովագրական գաղտնիք, այդ թվում ապահովագրության պայմանագրի համարը, ապահովագրավճարի չափը, ֆիզիկական անձ Ապահովադրի դեպքում իր անուն ազգանունը, անձնագիրը, իսկ իրավաբանական անձ Ապահովադրի դեպքում՝ կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ-ն, իրավաբանական հասցեն:

14.3. Ապահովադիրը տեղեկացված է, որ.

14.3.1. Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրի անձնական տվյալները չմշակել մատուցվող ծառայությունների հետ չկապված, Կանոններով չսահմանված այլ նպատակներով: Ապահովագրողն իր կողմից ստացված տեղեկությունները իրավունք ունի վերլուծելու, ուսումնասիրելու և գնահատելու է ապահովագրական ծառայություններ մատուցելու, դրա որակը բարձրացնելու, նոր առաջարկներ ներկայացնելու, ապահովագրավճարի չափը սահմանելու և հետադարձ պահանջներ ներկայացնելու համար:

14.3.2. Ապահովադրի անձնական տվյալները հասանելի են լինելու միայն Ապահովագրողի այն աշխատակիցներին, որոնք անմիջապես ներգրավված են ծառայությունների մատուցման գործընթացում, Կանոններով նշված այլ անձանց, ինչպես նաև կարող են փոխանցվել միայն այն կազմակերպություններին, որոնք «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով հանդես են գալիս որպես լիազորված անձինք: Ապահովադրի անձնական տվյալները չեն փոխանցվելու երրորդ անձանց՝ բացառությամբ օրենքով, ինչպես նաև Կանոններով ուղղակիորեն նախատեսված դեպքերի:

14.3.3. Կանոնների մեջ նշված անձնական տվյալների ուղղման, ոչնչացման, մշակման հետ կապված ցանկացած պահանջի վերաբերյալ Ապահովադիրը կարող է բանավոր կամ գրավոր դիմել Ապահովագրողին կապի ցանկացած հասանելի միջոցով կամ այցելելով Ապահովագրողի գրասենյակ: Ապահովագրողը պարտավոր է դիմումում նշված պահանջը կատարել կամ այն մերժելու վերաբերյալ պատճառաբանված գրավոր որոշումը Ապահովադրին տրամադրել՝ դիմումը ստանալու օրվանից 5 օրվա ընթացքում:

14.3.4. Ապահովագրողի հետ պայմանագրային հարաբերությունների ընթացքում սույն համաձայնությունը հետ կանչելու դեպքում Ապահովագրողը պարտավոր է դադարեցնել Ապահովադրի անձնական տվյալների մշակումը և ոչնչացնել դրանք՝ հետ կանչը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ այն անձնական տվյալների, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողի նկատմամբ Ապահովադրի պարտավորությունների ամբողջական կատարման ապահովման համար կամ որոնց համար օրենքով սահմանվում է տվյալների մշակման ավելի երկար ժամկետ: Այդ դեպքում Ապահովագրողը պետք է վկայակոչի օրենքի համապատասխան հոդվածը և տվյալների ցանկը, որոնք օրենքով պարտավոր է ավելի երկար ժամկետով մշակել: Նշված հանգամանքների վերացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավոր է բոլոր անձնական տվյալները ոչնչացնել: Սույն համաձայնությունը հետ կանչելու դեպքում Ապահովագրողը կարող է դադարեցնել մատուցվող ծառայությունները կամ պայմանագրային հարաբերությունները:

14.4. Համաձայնությունն ուժի մեջ է մտնում ապահովագրության պայմանագրի ստորագրման պահից և գործում է 5 տարի մինչև Կողմերի միջև առկա ցանկացած հարաբերության դադարումը և Ապահովագրողի նկատմամբ ունեցած պարտավորությունների ամբողջական կատարումը:

14.5. Ապահովագրողն իրավունք ունի Կանոններով սահմանված և օրենքով նախատեսված կարգով ստացված Անձնական տվյալները փոխանցել իր գործակալներին՝ Ապահովագրողի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, ծառայությունների վաճառքի առաջարկներ ներկայացնելու և դրա հետ կապված այլ գործողություններ կատարելու նպատակով:

14.6. Ապահովագրողն իրավունք ունի Կանոններով սահմանված Անձնական տվյալները փոխանցել համապատասխան ծառայություններ մատուցող յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձին, այդ թվում, սակայն չսահմանափակվելով՝ «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոնին՝ Ապահովադրի և/կամ Շահառուի սպասարկումը, այդ թվում՝ Ապահովադրի և/կամ Շահառուի արագ նույնականացումը, պատշաճ կերպով իրականացնելու նպատակով:

14.7. Ապահովագրողն իրավունք ունի Կանոններով սահմանված Անձնական տվյալները մշակել և օգտագործել Ապահովադրին և/կամ Շահառուին իր կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ գովազդային առաջարկներ ներկայացնելու նպատակով, այդ թվում՝ Ապահովադրի և/կամ Շահառուի էլեկտրոնային փոստի հասցեին և/կամ SMS հաղորդագրության միջոցով և/կամ Whatsapp հարթակի միջոցով և/կամ Viber հարթակի միջոցով և/կամ հաղորդակցության ցանկացած այլ միջոցի օգտագործմամբ:

ԳԼՈՒԽ 15. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15.1. Կանոնների համաձայն Ապահովագրողի կողմից Ապահովադրի (Շահառուի) հասցեին ուղարկված բոլոր ծանուցումները և գրությունները համարվում են պատշաճ ծանուցված, եթե պահպանվել են հետևյալ պայմաններից որևէ մեկը.

15.1.1. Ծանուցումը ուղարկվել է փոստային առաքմամբ՝ ապահովագրության Պայմանագրում կամ հայտային դիմումում նշված հասցեով,

15.1.2. Ծանուցումը ուղարկվել է SMS հաղորդագրությամբ՝ ապահովագրության Պայմանագրում կամ Ապահովադրի (Շահառուի) և/կամ նրա լիազոր անձի կողմից տրամադրած այլ փաստաթղթի մեջ (հայտային դիմում, հայտարարություն, և այլն) նշված հեռախոսահամարով,

15.1.3. Ծանուցումը ուղարկվել է էլեկտրոնային նամակի տեսքով՝ ապահովագրության Պայմանագրում կամ հայտային դիմումում նշված էլեկտրոնային հասցեով,

15.2. Հասցեների և/կամ վերոնշյալ ռեկվիզիտների փոփոխության դեպքում Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է այդ մասին ողջամիտ ժամկետում տեղեկացնել Ապահովագրողին: Եթե Ապահովագրողին ողջամիտ ժամկետում չեն տեղեկացրել հասցեների և/կամ այլ ռեկվիզիտների փոփոխության մասին, ապա Ապահովադրին (Շահառուին) ուղարկված բոլոր ծանուցումները/գրությունները հին հասցեներով/ռեկվիզիտներով համարվում են պատշաճ ծանուցված այն ամսաթվից, երբ այդ ծանուցումները ստացվել են այդ հասցեներում: